



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


# ԱՌԱՋԻՆ ՓՈԹՈՐԻԿԸ





# ԱՌԱՋԻՆ ՓՈԹՈՐԻԿԸ






ՊԵՏՐԵ ՍԱՄՍՈՆԻԶԵ



# ԱՌԱՋԻՆ ՓՈԹՈՐԻԿԸ

Թարգմ. Տ. ՓԻՐՈՒՄՅԱՆ



ՀԱՅՊԵՏՀՐԱՑ

1929 թ.



A I 8891  
10/08

## ՊԵՏՐԵ ՍԱՄՍՈՆԻԶԵ

Վրաց պրոդեա-բանաստեղծ Պետրե Սամսոնիձեն (Գու-թաթեւիձե) ծնվել է 1898 թվին Գուժախի գավառի Խոնի քա-ղաքում: Իր միջնակարգ կրթությունն ավարտել է 1919 թվին: 1917 թվից նա ննդամ է Կոմկուսակցության: Սամսոնիձեն սկսել է գրել 1911 թվից. իր առաջին յերկու բանաստեղծությունները լույս են տեսել 1917 թվին:

1923 թ. լույս է տեսել Սամսոնիձեյի բանաստեղծություն-ների ժողովածուն՝ «Կրակի հնչյուններ» վերնագրով: 1926-ին Վը-րաստանի Պետհրատը լույս է ընծայել հեղինակի բանաստեղծու-թյունների Բ. հատորը:

1928 թ. Շրոմա հրատարակչության կողմից լույս է տե-սել Սամսոնիձեյի ներկա «Առաջին փոթորիկ» պատմվածքը:

Նա գրել է նաև մի պիեսա, վոք բեմադրվել է Ռուսթավե-լու անվան ակադեմիական դրամայում:

Սամսոնիձեն Վրաստանի խորհրդայնացումից հետո յեղել է զանազան թերթերի և հանդեսների պատ. խմբագիր. ներկայումս նա աշխատում է Վրաստանի Պրոլետգրողների Ասոցիացիայի մեջ:

---

Գրառույ. № 2185. Պատվ. № 647. Հր. № 998. Տիրաժ 2000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեանում.

## ԱՌԱՋԻՆ ՓՈԹՈՐԻԿԸ

### I

Դեռևս գիշերը չէր հալվել, դեռևս յերկնքի ծայրը չէր բոցավառվել, չէր մի ինչ-վոր բան հրացանի գնդակի պես ճեղքեց ողը, կտրեց տարածութունը և գլուղի վրայով անցավ շփշփոցով: Դա մի անձանոթ թռչունն էր, վորը հպարտորեն նստեց հենց ափստեղ գտնվող մի լեղենու դագաթին ու կանչեց ափստեղ, ինչպես կանչում են մեզ մոտ աքաղաղները լուսաբացին.

— Դիլլիդոոո...

Դյուղը լսեց այդ կանչը և այդ որից հետո, չէր լիս իմ հասակակից ընկերների հետ միասին փողոց ելինք դուրս գնում խաղալու, նկատում էի, վոր գլուղացիք մի ինչ-վոր բանի մասին շշնջում էին իրար հետ, մի ինչ-վոր բանի մասին վիճում, աղմկում էին:

Այդ ժամանակ չես 7—8 տարեկան լերեխա և յի և աշխարհիս յերեսին բացի «լիկ տափերորա», «ճակունորա» և «կենճալորա» մանկական խաղերից վոչ մի բանով չեի հետաքրքրվում: Յեւ այդ այն պատճառով, վոր չես այն ժամանակ շատ յերջանիկ էյի ինձ դգում. հետագայում այդքան յերջանիկ այլևս չեմ լեղել:

Անցնում եյին որեր. գլուղում ինչ-վոր թերթիկ-ներ տարածվեցին. յերբ գլուղացիք այդ թերթիկները կարդացին, յես հաճախ լսում եյի՝ պրոկլամացիա, հեղափոխություն, միություն, սոցիալիստ և այլն բառերը:

Յես այն ժամանակ չեյի հասկանում, թե ինչ եյին նշանակում այդ ոտարոտի բառերը, բայց նկատեցի, վոր գլուղը հետզհետե իր գույնը փոխեց, և գլուղացի-ներ ի հանդարտ, պատկառանքով լի խոսակցություն-ներն ու դատողությունները նեղ փողոցներում արտահայտվող սիրահարվածների շնչոցի եյին նման-վում:

Յեթե առաջ շատ քիչ անգամ կարելի լի տես-նել խումբ-խումբ հավաքված գլուղացիներ, այժմ նը-րանք համարյա ամեն յերեկո կանգնած եյին լինում խումբ-խումբ Գենո Գոփոճեյի բակի դռան մոտ և վի-ճում եյին ինչ-վոր բանի մասին:

Յերբ մենք, յերեսաներս, «լիկ-տափերորա» խա-ղից հոգնած և ուժասպառ մոտենում եյինք նրանց լսելու, շատ բան չեյինք հասկանում նրանց խոսա-ծից, վորովհետև չգիտեյինք, թե ինչ եյին նշանակում հեղափոխություն, սոցիալիստ, միություն և այլ բա-ռերը:

Ինձ հափշտակել եր մանկական հետաքրքրություն-նը, և հաճախ ինձ ու ինձ ասում եյի.

— Ինչո՞ւ չես բեղ ու միրուք չունեմ ու մեծ չեմ վոր հասկանամ այդ բառերի իմաստն ու խառնվեմ մարդկանց խոսակցությանը:

Հաճախ իմ ընկերներ Կոստայի կամ Դաթիկոյի լայն բաղում «ճակունորա» եյինք խաղում:

Յես աջողակ ու աշխուժ ելի և իմ հասակակից ընկերների սիրտը միշտ ճաքացնում եյի իմ ճարակութեամբ ու քաջութեամբ: Այդ «ճակունորած»-ի միջոցին դուժ անվող կլոր փայտը լես միշտ, մի փոքր դժվարութիւնից հետո, խփում եյի նշանին:

Այդ եր պատճառը, վոր յերբ մենք հավաքվում եյինք խաղալու և յերկու կուսակցութիւն եյինք կազմում, ամեն մեկը դրանցից աշխատում եր, վոր յես իրենց մեջն ընկնելի: Հաճախ ակնպես ել եր պատահում, վոր խմբակներից մեկն իմ փոխարեն չերկու խաղացող եր գիշում մյուսին, և լես ել պարծենում ելի դրանով, վորովհետեւ այդ բոլորներին լես ինձ ժողովրդական հերոս Արսենին կամ Ղարամանին եյի նմանեցնում:

Յես այն ժամանակ դրել-կարդալ չգիտեյի, բայց շատ հերոսական պատմութիւններ ու հեքիաթներ եյի լսել:

Մայրս անգիր գիտեր Արսենի մասին հորինված յերգերը. և չերբ.մենք, յերեխաներս, ձմեռվա ցուրտ ու յերկար յերկոններին, ոջախի շուրջը նստած սկսում եյինք ձանձրանալ ու նիրհել, նա սկսում եր արտասանել այդ վոտանավորները:

Մենք, յերեխաներս ել, սթափվելով, կաշում եյինք մայրիկի ծնկներին ու վողկորութեամբ լսում Արսենի մասին հորինված հերոսական պատմութիւնները: Մեր հայրը լավ կարդալ գիտեր և ակնածութեամբ եր պահում արկղում մեր հին անվանի դուցազներգութիւնները, վորոնց մեջն եր, իհարկե, նաեւ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը»:

Հայրս վորջնադիր եր, և լես ել այն ժամանակ

աջնպես եյի յերևակայում, թե Խոնի քաղաքում գտնվող բոլոր աղյուսե տները հայրս եր կառուցել: Յես այն ժամանակ չեյի կարող յերևակայել, թե բացի հորիցս կարող եր մի ուրիշ մարդ ել տներ կառուցել:

Հայրս հաճախ տանը չեւ լինում, փնում եր աշխատավայրում, բայց սուսն գալուն պես՝ ազատ ժամերին հավաքում եր իր շուրջը բոլոր զավակներին և սկսում զանազան պրքեր կարդալ մեզ համար: Այդ ընթերցանության միջոցին մենք նստած եյինք միևմած ու սրտի թրթռոցով լսում եյինք Ղարաման կամ Ռոստեան դուցազնների մասին հորինված պատմությունները:

Յերբ հայրս հոգնում եր կարդալուց, ծալում եր գիրքը, մի հայացք նետում հավի ձագուկների նման հանգիստ նստած յերեսանների վրա: Այդ միջոցին նրա աչքերը փայլում եյին ուրախությունից, նա գրկում եր մեզանից վորեւ մեկին ու անգիր արտասանում Դավիթ Գուրամիշվիլու\*) վոգեորիչ ու խրատական վտանավորներից մեկն ու մեկը:

Յեւ հենց այդ դուցազնական պատմությունների ընթերցումն եր պատճառը, վոր յես իմ հասակից ընկերների հետ լինելու միջոցին աշխատում եյի նմանվել Արսենին կամ Ղարամանին, վորպեսզի ամենքի աչքում մի անհաղթելի հերոս յերևայի...

## II

Մի անգամ մեր բաղում հավաքվեցինք չես և Դաթիկիա, Բաչքունիա, Ղուսուա և Կվերկվիզա ընկերներս:

\*) 18-րդ դարի վրաց բանաստեղծ:

Հենց վոր «կոտա» կոչված կլոր փայտը դեպի վեր շարտեցինք, և խաղը պետք ե սկսվելը, բակի դռանը մոտեցավ Գինո Գոփոձեն ու ձայն տվեց.

— Ծաճվիայա՛մ, Ծաճվիայա՛մ, արի, սիրելիս, այստեղ...

Յես շտապով վազեցի դեպի բակի դռուը, միաժամանակ ուրախութունից թռչկոտում էլի ու ձայներ արձակում ա՛յն պատճառով, վոր Գինո Գոփոձեյի նման լուրջ և ամենքից հարգված մի մարդ տալիս եր իմ անունը:

— Ա՛յ տղա, Ծաճվիայա՛մ, վազիր, հորդ կանչիր:

— Հայրիկա տանը չի,—պատասխանեցի յես:

— Վճրտեղ ե,—դժգոհությամբ հարցրեց նա:

— Խոնիրումն ե, աշխատում ե այնտեղ...

— Դե լավ, չերբ նա դա, ահա այս թղթերն ու գրքերը տուր նրան և տաա, վոր յես այս յերեկո գալու չեմ նրա մոտ, տանը թող սպասի ինձ:

Այդ ասաց Գինոն, գրքերը տվեց ինձ ու հեռացավ:

Յես ուրախությամբ գրքերը կրծքիս կպցրի ու վազեցի տուն:

— Մայրիկ, մայրիկ,—խելագարի նման ընկա մորս վրա, վորը կռները քշտած՝ «դոմի»\*) չեր հունցում կաթսայում:

— Ի՞նչ ե պատահել, ցավդ տանի մայրիկդ:

— Գինո Գոփոձեն այս թղթերը տվեց ու ասաց, վոր հայրիկիս ասեմ՝ վոչ մի տեղ չգնա յերեկոյան, Գինոն դալու չե նրա մոտ:

\*) Կորեկի տեսակներից մեկը:

— Խոնչ թղթեր են, լերևի դարձյալ սատանայա-  
կան բաներ են...

— Յես թոն գիտեմ, մայրիկ...

Թղթերը դարսեցի մորս մատնանշած տեղում ու  
թռչկոտելով դուրս վազեցի ընկերներին մոտ։ Միաժա-  
մանակ ուրախանում ելի, վոր լերեկոյան մեր տուն  
կգա Գենո Գոփոճեն, ու յես հնարավորություն կունե-  
նամ լսելու նրա՝ հորս հետ ունեցած խոսակցությունը։

— Այն մուրտառն թոն էր ուզում, ա՛յ տղա, —  
հարցրեց ինձ հնդկահավի պես ուռած Ղուտուան ու  
աչքիւրը չռած նայում էր դեմքիս։

— Խոնչ ե պատահել, Ղուտուա՛, ինչո՞ւ յես հայ-  
հոյում աջնպիսի լավ մարդուն։

— Լավ մարդ ե, ինչպե՞ս չե, — արտասանեց նո-  
րից հոնքերը կիտած Ղուտուան, և յես ել մտածմուն-  
քի մեջ ընկա։

Ղուտուան մոտ լերեք տարով մեզանից մեծ էր,  
բայց և այնպես նա մեր ընկերն էր համարվում, վո-  
րովհետև չափազանց կարճահասակ էր, և զրա համար  
նրա հասակակից ընկերներն արհամարհանքով ելին վե-  
րաբերվում նրան։ Այդ պատճառով ել նա իր համար  
ընկերներ էր ընտրել այնպիսիներին, վորոնք հասա-  
կով իրենից բարձր չեյին։ Այդպիսիները հենց մենք  
եյինք, բայց զրա փոխարեն նա մեզանից տարբեր-  
վում էր իր խելքով ու փորձառությամբ, և մենք ել  
միշտ մի տեսակ ազնաժողովյամբ եյինք վերաբերվում  
նրան։

Յե՛վ այժմ, յերբ Ղուտուան ալդպես անարգան-  
քով արտահայտվեց Գենոյի վերաբերությամբ, վորն,  
իմ կարծիքով, ամենախելոք ու ամենասիրելի անձն

եր մեր դուռը,—յես մի տեսակ անհասկանալի յերևույթ ելի նկատում և վճռեցի իմանալ, թե ինչու յերաջրքան դառնությամբ հայհոյում Ղուտուան Գինոյին:

— Ղուտուան, թե յեղբայր ես, մի բան եմ խընդրում քեզանից, և դու պետք ե կատարես,—դիմեցի յես նրան:

— Ի՞նչ ես ուզում, այ տղա:

— Այն եմ ուզում, վոր ինձ բացատրես, թե ինչու յես հայհոյում Գինոյին:

— Հայհոյում եմ այն պատճառով, վորնա մուրտառ ե և անպիտան:

— Ի՞նչպես:

— Ահա թե ինչպես: Այդ գետինը մտածը սիրահարվել ե իմ քույր Յուլիայայի վրա ու տեսել շատերին. «Յեթե յես Ստեփան Ավալիանիի աղջիկ Յուլիայայի հետ չամուսնանամ, ապրել չեմ կարող»: Այս կիրակի յերեկոյան, յերբ ժողովուրդը ցրվել ե յեկեղեցու մոտ գտնված դաշտից, այդ մուրտառը հետապնդել ե Յուլիայային ու հալտնել նրան իր սիրո մասին: Մենք զնացինք տուն, ընթրիքը պատրաստեցինք ու սպասում եյինք Յուլիայայի գալուն, բայց նա չկար ու չկար: Հետո հայրս գնաց փնտռելու և նրան գտել եր Փիրանենց բակի դռան մոտ: Նրանք յերկուսը միասին կանգնած են յեղի այդտեղ գտնվող ընկուղենու տակ, իրար զրկած: Հայրս, այդ տեսնելուն պես, կրակ ե կտրել, շտապով կտրել և Ամբրոսիի բակի դռան մոտ գտնվող թթենուց մի ճյուղ ու հարձակվել ե Յուլիայայի վրա... Դրան մի լավ լազաթին ծեծել ե, իսկ այն մուրտառը թռել ե Սերափենց չափարի վրայով ու ծեծված շան նման վազել իրենց տան կողմը:

Այն գիշեր հայրս շատ ծեծեց Յուդայային: Մեծում եր ու բղավում:

— Այս ի՞նչպէս խայտառակեցիր ինձ, ի՞նչպէս խայտառակեցիր, անպիտան աղջիկ: Ի՞նչ գործ ունեցիր դու մեն-մենակ այս կեսգիշերին մեր նախկին ճորտի վորդու հետ:

Մենք և մայրիկս շատ ելինք մեղքանում խեղճ աղջկան, բայց ի՞նչ կարող էյինք անել: Մեզանից վոչ մեկը չեր համարձակվում ձայն հանել:

Իսկ հայրիկս շարունակում եր բղավել ու հայհոյել:

— Ի՞նչպէս համարձակվեց այն անպիտանն աղջրկաս հետ խոսել, ան մուրտաոր, այն սոցխալիստը...

Մյուս որը, չերեկոյան, այն անպիտանը հորս մոտ եր ուղարկել Բեսոյի տղա Նեստորին:

Մենք ամենքս նստած ելինք տանը: Մայրս ընթերիք եր պատրաստում... Հայրիկս հարմոնիկա յեր նվագում: Յուդայան իր վողըն ավարտել եր ու բուրդ եր գգում, իսկ մենք, չերեխաներս, հավաքվել ելինք ոջախի շուրջը և «գոջալորիա» խաղն ելինք խաղում: Այդ ժամանակ դուրսը մեր Բժուլիան հաջեց, ու լսվեց մի ձայն:

— Հյուրընկալ, մի բռնի դուրս յեկեք... այս անիծած շունը կերավ ինձ...

Հայրիկս գնաց դուրս և հետը բերեց մեր տուն Բեսոյի վորդի Նեստորին:

— Բարև ամենքին,—ասաց մտնելուն պես Նեստորը և նստեց հենց այնտեղ, ոջախի մոտ դրված չեռոտանի նստարանի վրա:

— Բարե՛ք եղ ել,—պատասխանեց մայրիկս:

Լուսթյուն տիրեց:

— Ի՞նչ բանի համար ես նեղություն քաշել, պարոն Նեստոր,—սկսեց հայրիկս:

— Նրա համար, պարոն Ստեփան, վոր հրեն ղ-ջըկադ թշերը վորդան-կարմրի պես կարմրել են, ժամանակ է, վոր ամուսնացնենք...

— Ե՛հ, սիրելի՛ Նեստոր, յես ինքս ել եմ ուղուս ամուսնացնել, բայց վոչ փող ունեմ և վոչ ել բաժինք, իսկ այդպես ռիվ կտանի դրան: Դու լավ դիտես, սիրելի՛ Նեստոր, վոր չքավոր մարդու բանը դժվար է:

— Ե՛հ, սիրելի՛ Ստեփան, դու այդ մասին մի մտածիր: Յես աջնսլիսի մի փեսացու ճարեմ քեզ համար, վոր...

— Մի՛թի առանց ոժիտի ու առանց փողի:

— Իհարկե, հրեշտակի նման մարդ է, հրեշտակի...

— Ա՛յ տղա, ասա մեկ տեսնենք ռիվ է,—ասաց հայրիկս, ու նրա դեմքը պայծառացավ: Մայրիկս ել ընդհատեց իր զբաղմունքը և սկսեց նայել Նեստորին, իսկ Յուցայան դարձյալ բուրդն եր գզում:

— Այդ մարդը, սիրելի՛ Ստեփան, ամենքից հարգված Գենո Գոփոձեն է...

Այդ խոսքերը լսելուն պես ուրախությունից կարմրած Յուցայան ընդհատեց բուրդ դզելն ու գլուխը բարձրացրեց... Իսկ հայրս մի տեսակ կծկվեց, դեմքը ծոմոնեց ու մի յերեք բոպելից հետո վառողի նման չայթեց.

— Ի՞նչ... այդ ի՞նչ ասացիր, ան մարդ... Յես անպիտան, հասարակ գյուղացի ու սոցիալիստ Գենոյի հետ աղջկաս ամուսնացնեմ... Ը՛հ, ճի, ճի, այդ ի՞նչ ասացիր ինձ, ան մարդ...

Յուդայայի դեմքը նորից ծռավեց ու նորից սկսեց բուրդը գզել։ Խսկ Նեստորը, կարծես վռչինչ պատահած չլինի, ձեռքը քսեց իր լերկար բեղերին և սկսեց.

— Պարոն Ստեփան, դու խելոք մարդ ես... Մտածիր... ծանր ու թեթև արա... Դու գիտես, վոր շտապելով ու զայրանալով լավ գործ չինել չի կարելի...

— Վո՛չ, վո՛չ, պարոն Նեստոր, դու ինձ ասել մի ասա... Ի՞նչ ես ասում, այ մարդ։ Աղջկաս տամ մեր նախկին ճորտի վորդուն... Ո՛հ, այդ թնչասացիր ինձ... Այն ժամանակ թնչ կասեն ինձ հորս ու պապիս հոգիներն ասն կյանքում։ Ձե՛ վոր նրանք կոկորդիս կըսեղմեն ու կասեն. «Այդ թնչ արիր դու, թնչպիս թույլ տվիր քեզ այդքան ստորոթյուն, վոր աղջկադ տվիր մեր ճորտ Սուլոմոն Գոփոճեյի վորդուն»։ Ձե, ասել ել վոր մի կողմ թողնենք, միթե ազգականներս չեն դատապարտի ինձ, պետական ազնվական Ստեփան Ավալիանուս, վոր աղջկաս ամուսնացրել եմ մի ինչ-վոր անկարգ, հիմար լերիտասարդի, մի ինչ-վոր սոցիալիստի հետ... Վո՛չ, վո՛չ, պարոն Ստեփան, չես կգերադասեմ, վոր աղջիկս տանս պառավի, քան ասն աղտոտի կինը դառնա։ Փող ու բաժինք չունեմ, պարոն Նեստոր, բայց, — աստեղ հայրիկս հպարտորեն ձգվեց, — բայց անվան տեր եմ, ինքնասիրությունս դեռ չեմ կորցրել... Ինչ ել լինեմ, ազնվականի վորդի յեմ, ազնվականի արյունն յիռում լերակներիս մեջ... Այդ ել վոր մի կողմը թողնենք, սիրելի Նեստոր, դու ինքդ գիտես, վոր Գենո Գոփոճեն կին ու զավակներ պահող մարդ չե... Նա սեփական տուն չունի, թրև ե գալիս փողոցներում, ինչ-վոր

պրոկլամացիաներ ե բռնել ձեռքին ու շարունակ բղավում ե՝ հավասարություն ու միություն... Այ՛ մարդ հիվ ե լսել հավասարություն, հիվ ե հավասարացրել իրար հետ սարերն ու դաշտավայրերը: Ո՞վ կարող ե հաղթել ռուս թագավորին... Մի՞թե ավելի լավ չեր լինի, վոր այդ դժբախտ մարդն իրենց չքավոր տան գործերը կարգի բերեր: Այդպիսի սոցիալիստներին—յեթե ճշմարտությունն ես ուզում լսել, սիրելի՛ Նեստոր—պետք ե կախել, կախել: Այդպիսի դատարկագլուխները խառնակություն են գցում ժողովրդի մեջ ու ջուրը պղտորում, թե չե մենք առանց դրանց կապը ելինք,—ասաց հայրիկս ու պապիրոսը վառեց:

Իսկ Նեստորը գլուխը կախեց և ինչ-վոր մտածում եր, բայց քիչ ժամանակից հետո գլուխը բարձրացրեց ու ասաց հայրիկիս.

— Պարոն Ստեփան, շատ եմ ցավում, վոր քեզ նման մի գիտակից մարդ այդպիսի բաներ ե ասում... Դա լինչ խոսք ե, թե ազնվական եք, ու ազնվականի արյուն ե լեռում ձեր լերակներում... Ինչի՞ նման ե դա: Յես, որինակ, քեզ նման ազնվական չեմ, բայց ինչհիվ եմ քեզանից պակաս: Մի՞թե լես քեզանից պակաս արյուն, գույն ու միս ունեմ: Կամ գուցե ինձանից ավելի կարողություն ու գիւլք ունես. այդ ել ճիշտ չե, վորովհետեւ դու այս մի խարխուլ խրճիթից ավելի վոչինչ չունես, իսկ լես 4 սենյակից բաղկացած մի լավ տուն ունեմ... Դու այս փոքրիկ բակից ավելի մի վոտ դնելու տեղ չունես, իսկ լես հինգ-վեց որավար հող ունեմ աստծու վողորմությամբ: Ե՛հ, լերանի այդ խոսքերը չասելիք ինձ, սիրելի Ստեփան, ու թեկուզ մորթեյիր ինձ... Այժմ Գենո

Գոփոճեյի մասին: Նա, ճիշտ է, ազնվական չէ, բայց դրա փոխարեն գիտակից ու զարգացած յերիտասարդ է: Խելոք խոսող է ու քաջ: Դրա նման զարգացած մարդ, յիժե ուզում ես ճշմարտությունը լսել, սիրելի Ստեփան, ամբողջ աշխարհում չի լինի... Նրա համար մի կիսնայի աղջիկ: Միժե աղջկանիցդ մի պակասարժանիքի տեր աղջկա հետ կամուսնանա: Բայց դու գիտես, թե ինչ է սերը: Դրանք, դժբախտաբար, սիրահարվել են իրար վրա:

— Ի՞նչ, ի՞նչ, միմյանց վրա սիրահարվե՞լ են, ասում ես,—գոռաց հայրիկս:

— Սիրահարվել են, բա, յիժե չես հավատում, հարցրու աղջկանդ:

Հայրիկս, այդ լսելուն պես, տեղից վեր թռաւ և սեղմած բռունցքներով հարձակվեց Յուդայայի վրա, վորն իր գլուխը կորցրել էր ու լաց եր լինում:

— Ճիշտ է, աղջիկ: ճիշտ է, ինչ վոր ասում են:

— Յուդայան ավելի ևս կախեց գլուխն ու լալով վոտքի կանգնեց և կամենում էր սենյակից դուրս գալ:

— Ո՛ւր ես գնում, չեմ թողնի... Ճիշտ սիրում ես այն մուրտառին ու անարգին: Ասա, ճիշտ է այդ,—գոռում էր հայրս, բայց Յուդայան ձայն չեր հանում և դարձյալ հեծկլտում էր՝ մի ձեռքով լերեսը ծածկելով:

— Պարոն Ստեփան,—դիմեց վերջը Նեստորը հայրիկիս,—տեսնում ես, վոր ակջիկդ լուռ է, իսկ լուռթյունը համաձայնության նշան է, ուրեմն...

— Ի՞նչ, ինչ ասացի՞ր, ինչպե՞ս ես համարձակ-

վում ալդպես խոսել: Բայց չէ՞ վոր դու յեւ քո Գոփո-  
ձեյի պես մի ստոր ու անպիտան մարդ ես... Բայց,  
հի, լերանի դու իմ հյուրը չլինեյիր, և այն ժամանակ  
յեթե մեռնելի ել, չեյի ցավի:

— Հետաքրքիր և իմանալ, թե ինչ կանեյիր,—  
հարցրեց համբերութունից դուրս լեկած Նեստորը:

— Ինչ վոր կանեյի, դու այն ժամանակ կտես-  
նեյիր...

— Ի՞նչ, ի՞նչ, ասոսա վոր, ճիշտ, քո հյուրն եմ,  
թե չե քիթդ սոխի պես կջարդելի...

— Ի՞նչ, ինչ ասացիր, իսկապես ասոսա, վոր  
դու իմ հյուրն ես, թե չե... Բայց ֆնաս չունի, ձեզ  
նման անարգների ու մուրտառների հետ յես միշտ  
հաշիվս կտեսնեմ... Իսկ այժմ հեռացիր, կորիւր ալս-  
տեղից... եւ աչքիս չերեաս...

— Թճճ, քո մարդ ասողին ինչ ասեմ, անպի-  
տան, ստոր արարած, մուղիկանտ...—ասաց Նեստորն  
ու խրճիթից դուրս դնաց...

Իսկ ալդ դեպքից հետո հայրիկս ամբողջ գիշեր  
բղավում եր ու հայհոյում: Այնքան ծեծեց խեղճ Յու-  
ցայային, վոր քիչ եր մնացել սպաներ:

Մենք ամենքս պառկեցինք քնելու, բայց հայ-  
րիկիս հայհոյանքը քնած միջոցին ել ելինք լսում:

— Մուրտառներ, յեթե յես Ստեփան Ավալիանին  
եմ, ամենքի հախիցն ել կգամ...

... Այդ պատմութիւնն ավարտելուն պես Ղու-  
տուան հեգնանքով գլուխը բարձրացրեց ու սոսաց  
ինձ.

— Միթե անարգ ու անպիտան մարդ չի ալդ  
Գենո կոչվածը...

Այդ պատմութիւնն ինձ վրա մեծ տպավորութիւն թողեց, բայց պարզ չեի կարողանում հասկանալ, թե ինչու՞նք եր մեղավոր Գենոն:

Մտածմունքի մեջ ընկա... Մտածմունքի մեջ ընկա այնպես, ինչպես այդ կարող ե անել մի 7—8 տարեկան, հարցասիրութեամբ հափշտակված ու ամեն ինչ գիտենալ ցանկացող լերեխա: Հսնկարժ հիշեցի մորս և ուրախացած, վոր մայրս կկարողանա ոգնել ինձ այդ հարցը պարզելու, ընկերներին թողի ու վազեցի տուն: Մայրս ավարտել եր դոմի հունցելը և այժմ ոջախի վրա խորովում եր շամփուրի վրա անցկացրած մի վառիկ:

— Մայրիկ, — հարցրի լես մայրիկին տուն հանելուն պես, — ճիշտ ե, վոր Գենոն մի ստոր ու անարգ մարդ ե:

— Ինչ՞ա լես այդպիսի հարց տալիս ինձ, վորդի:

— Այն պատճառով, վոր... — ու սկսեցի պատմել այն բոլորը, ինչ հաղորդել եր ինձ Ղուտուան Գենոյի վերաբերութեամբ:

— Այդ պատմութիւնն ինձ ել ե հալտնի, վորդի, բայց այդ հիման վրա մենք չենք կարող ասել, թե Գենոն վատ մարդ ե:

— Ինչ՞ա, մայրիկ:

— Նրա համար, վոր Գենոն ու այն աղջիկը սիրում են իրար:

— Ուրեմն, մայրիկ, Գենոն լավ մարդ ե:

— Այո, վորդի, նա չափազանց հարգելի, խելոք ու զարգացած լերիտասարդ ե... Բացի դրանից, նա սոցիալիստ ել ե...

— Ի՞նչ ե նշանակում, մայրիկ, սոցիալիստ...

— Սոցիալիստ են կոչվում այն մարդիկ, վորոնք կոչվում են ոռւսաց թագավորի դեմ և ժողովրդի բարորությունն են ուզում:

— Ուրեմն Գենո Գոփոձեն ժողովրդի բարորությունն ե ուզում...

— Այո, վորդի:

— Հապա ինչո՞ւ Ստեփանն իր աղջիկը չի տալիս նրան:

— Այն պատճառով, վորդի, վոր Ստեփան Ավալիանին մի անխելք ու գողոզ ազնվական ե... Դու տեսնում ես, վոր այս գլուղի բոլոր գեղջուկներն ու ազնվականներն աշխատում են: Դրանց մի մասն արտերն ե վարում, մյուսը ցեխ շաղախում, ֆնացածներն ել այլևայլ զբաղմունքներ ունեն, իսկ Ստեփանն աւտում ե, թե ինքն ազնվական ե, և աշխատելն իր համար անպատվաբեր ե: Դրա փոխարեն նա հարմոնիկան ձեռին՝ իր կյանքը զվարճության մեջ ե անցկացնում:

— Ա՞յդ ե պատճառը, մայրիկ, վոր Ստեփանն այնպես չքավոր ե:

— Այդ ե պատճառը, վորդի, ինքը չի աշխատում, իսկ չեթե լերբեմն միքանի գող ե ստանում ուրիշների հարմոնիկաները նորոգելու համար, այդ փողն ել ծախսում ե գինու և զվարճության վրա:

Այդ խոսակցությունն աչքերս բացեց:

Գլխի ընկա, թե ինչու չեմ Ղուտուան հայհոյում Գենոյին, հասկացա, թե ինչ եր նշանակում սոցիալիստ, թե ինչ եր նշանակում մեծամիտ ազնվական և այլն:

Առաջ չես տեսնում ելի, վոր Ստեփանը չեմ աշխատում և իր աղքատ ժամանակը քեֆերումն եր անց-

կացնում, բայց չգիտեյի, վոր դրա պատճառը գոռոզ ազնվական լինելու մեջն եր կայանում:

Այժմ ամեն ինչ հասկացա և տեսցի Ստեփանին, վորը յերկար, կարմրած քիթ ուներ, և վորի փոքրիկ տնից միշտ լսվում ելին արգանի ու հարմոնիկայի ձայներ և հարբած մարդկանց գոռոցներ ու հայհոյանքներ:

Յես ավելի սիրեցի Գենույին, վորը զեղեցիկ, խելացի աչքեր ուներ, և վորի խոհեմության մասին գլուղացիք լավ կարծիք ունեյին:

Յես ինձ հանկարծ կերպարանափոխված զգացի. ամեն ինչի բաց աչքով ելի նայում ու մտքումս աւսում:

— Յերանի լես ել, սիրելի՛ քեռի Գենո, մեծ լինեմ, քեզ պես բոլ ու մորուք ունենամ, քեզ նման խոսել իմանամ, վորպեսզի ամեն բանում աջակցեմ քեզ:

#### IV

Յերեկոն յեկավ, և հունի գուլն ստացավ շրջապատ—դրախտը: Սև սաթի կտորները սրիվ լեկան տարածության մեջ, և աշխուժ ձայներ արձակեց լեռեկոյան գլուղը:

Փողոցները լցվեցին արոտատեղերից վերադարձող նախրով: Կովերը մոտեցան բակերի դռներին ու բակերին և սկսեցին գոհունակությամբ բառաչել:

Վզները յերկարացրած հորթերն ել, լսելով այդ բառաչը և զգալով ուրախության մոտենալը, սկսեցին աշխուժ ձայներ հանել:

Փոքրիկ հովիվները, վորոնց դեմքի մորթը մի-

քանի անգամ պոկվել եր արևի տակ ման գալուց ու ջրի մեջ լողանալուց, և վորոնց վոտները ճաքճաքվել էյին քարերից ու փշոտ թփերից, քշեցին անասուններին իրենց տերերի մոտ:

Աշխուժ հովիվներին տեսնելուն պես շներն սկսեցին հաջել զալրացած, բայց քիչ ժամանակից հետո բոլորն ել ձայները կտրեցին և ամաչած, ինչան ներողություն խնդրելու, շողոքորթությամբ գլորվում էյին նրանց վոտների տակ... Այդպես էյին վարվում շները, չերևի այն պատճառով, վոր նրանք այդ փոքր լերկոտանիներին իրենց սեփական բարեկամն ու ընկերն էյին համարում:

Դեռ ու դեռ ընկան նաև կանալք և կաթնամանները ձեռքներին վազում էյին իրենց եգ անասուններին կթելու:

Դրանից հետո պատանիները ճչալով ու ահագին դժվարությամբ քշեցին խոզերին խոզանոց և դուռը պինդ փակեցին, վորպեսզի նրանք գիշերով դուրս չգան ու իրենց տերերի տունը չքանդեն:

Գլուղացիք ել վերադարձան արտերից, անտառներից, աղյուսի գործարաններից ու շտապեցնում էյին իրենց կանանց, վոր, ինչքան կարելի չե, շուտ ընթրիք ուտեցնեն ու հանգստացնեն նրանց—այդ ամբողջ օրն աշխատածներին:

Յես կանգնած էյի բակի դռան մոտ և սրտի բաբախումով նայում էյի դեպի Խոնի քաղաքը տանող փողոցին...

Յես սպասում էյի հալըիկիս...

Մթնեց... Աստղերը լուսավորեցին լերկինքը: Մղրիվներն սկսեցին իրենց ծղրտոցը բոլոր չափար-

ներից ու թփերի տակից: Գորտերն սկսեցին իրենց կռկռոցը մոտակա փոսերից ու ծառերի խոռոչներից: Հուսատունիկները բաց արին իրենց թևերը և փոքրիկ փայլատակուճներով ու աղամանդներով լցրին սև թափածուխը:

Ոչխառաց գարնան յերեկոն, և լերերաց լերակայության շրջապատը:

— Ի՞նչ ե սա արդյոք... Մի՞թե կարմիր լերակայություն...

— Վհչ, սա Կոլխեթի\*) յերեկոն ե—հանգիստ ու անծայրածիր, հանդարտ ու լուռ, վորը հմայիչ կերպով բացել ե իր կախարդական կուրծքը և հրավիրում ե իր մոտ բոլոր սիրողներին... Դա Յեդեսն ե փերուզյա լերկնակամարի տակ, վորը թևեր ե տալիս յերակայության ու խաղացնում բոլոր եյակներին հեքիաթային դգվանքով:

Բաց գորտերը դարձյալ կռկռում եին և ծղրիղները դարձյալ ծղրտում՝ մարդկանց հաճույք պատճառելու համար:

Յերևաց մի ստվեր...

— Հայրիկ...—ուրախությամբ վրա ընկա ստվերին և կպա նրա կրծքին...

Հորս կրծքին փարած միջոցին յես միշտ ղգում եյի քրտնքի հոտ, և յես ել սիրում եյի այդ հոտը, վորովհետև դրանով յես ձուլվում եյի սիրելի հորս եյության ու հոգու մեջ: Յերբ յես այժմ ուշադրություն եմ դարձնում այդ հանգամանքի վրա, բացատրում եմ այդ նրանով, վոր Հափազանց սիրելիս եմ լեղել հորս:

\*) Կոլքես, Колхида, նախկին Գուլթայիս նահանգի մի մասը Սև ծովի ափին:

— Հայրիկ, գիտե՞ս ինչով պետք է ուրախացնեմ քեզ:

— Ինչո՞վ, զավակս:

— Այսօր Գենո Գոփոճեն մեր տանն երևեց և քեզ երևողում տեսնել: Յես ասացի, թե տանը չի: Այն ժամանակ նա ինչ-վոր թղթեր թողեց և աւաց. «Այս չեք հիշողի՞ք, հայրդ թող տանը մնա»:

Այդ խոսակցութեամբ մենք մեր սենյակը մըտանք:

Հայրս խսկուկն սկսեց բերված թղթերն աչքի տնցնել... Իսկ մայրս ընթրիք պատրաստեց:

Ընթրիցիւնք և հինց նոր ելինք պատշգամբ դուրս լեկել, վոր բակի դռնից լավեց «հլուրընկա՛լ» ձայնը:

Մեր Բախուզուրեն սաստիկ հաջեց ու վազեց ընդարձակ բակով ձա՛նի կողմը: Բախուզուրելի չետից վազեց հայրիկս, և մի յերկու բոպելից հետո մեր պատշգամբում նստած ելին հայրիկս ու նա...

Յես հենվեցի հայրիկիս ծնողական ծնկներին և աչքերս հառեցի Գենոյին:

Գենոն 25—26 տարեկան մի յերիտասարդ երևուց: Վոլորված փոքրիկ բեղեր ու փալլուն դեմք: Աչքերը ներս ելին ընկած և կաշժեր ելին սփռում կաշժաքարի պես: Շնորհքով խուզած մաղերը չերևում ելին «կեպկեպ»-ի տակից, վորը գլուղացիք «ժոկե» ելին անվանում:

Նրա զգեստն ուրիշների հագածից տարբերվում եր, վորովհետև, ինչպես ասում ելին, նա «ոռուսական հագուստ» ունեւր:

Հետո չես տեղեկացա, վոր Գենոն այն պատճառով եր ոռուսական հագուստ հագնում ու ժոկե ծածկում, վոր բանվոր եր յեղել Բաթումում:

Յես հենվեցի հայրիկիս ծնողական ծնկներին ու շեշտակի նայում եյի Գինոյի խելացի աչքերին:

— Սամսոն սկսեց Գինոն, — ձեզ հայտնի չե գալուս նպատակը... Ժամանակը չի համբերում... պետք ե գործի անցնենք... Քաղաքներում արդեն հիմնել են բանվորական խորհուրդներ... Շատ գլուղեր ել արձագանգել են նրանց ու կազմակերպել իրենց վարչութիւնները: Իսկ մենք չեա ենք մնացել: Այդ պատճառով մենք այդ հարցը պետք ե կարգի բերենք այս կարճ ժամանակում: Յես մտածում եմ, վոր մայիսի մեկին պետք ե գյուղացիների ընդհանուր ժողով կայացնենք:

— Այդ ժողովի գլխավոր նպատակն ի՞նչ ե լինելու:

— Մերժել գոյութիւն ունեցող իշխանութիւնը ե կառավարութիւնը հանձնել պուղին:

— Ավելի լավ ասած՝ մենք պետք ե մեր կառավարութիւնը հիմնենք:

— Այո:

— Իսկ պրիստամիւ ու նրա սարաժնիկները...

— Նրանք արդեն թուլացել են... դիմադրութիւն ցույց տալ չեն հանդգնի... Համենայն դեպս մենք կկարողանանք սանձել նրանց:

— Ի՞նչպեա պետք ե կազմակերպենք մեր իշխանութիւնը:

— Կընտրենք տասնապետներ ու հարյուրապետներ, հետո հազարապետ, այսինքն՝ գլուղի պետ, վորը ձեռք կզարկի գլուղական բոլոր գործերը կարգի բերելուն: Բացի դրանից, պետք ե ընտրենք նաե գլուղական դատարան:

— Պետք չէն լինի արդյոք զինված պահապաններ՝ կարգը պահպանելու համար:

— Ինչպէս չե՞. . մենք կուենանք կարմիր մարտիկներ:

— Հիմա ի՞նչ ե լինելու մեր գլխավոր աշխատանքը:

— Գլուղացիների մեջ պետք ե ազիտացիա մղենք: Հենց դրա համար եմ ձեզ մոտ բերել այս գըրքերն ու պրակլամացիաները... Դու պետք ե ցրես այդ բոլորը ժողովրդի մեջ, պետք ե մարդիկ պատրաստես: Ահա այս ել պատրաստել եմ առաջապետների ու հարյուրապետների ցուցակը,—և այս խոսքերի հետ Գենոն գրպանից հանեց ինչ-վոր թղթեր ու հանձնեց հորս: Հայրս աչքի անցկացրեց ու նորից վերադարձրեց, ասելով.

— Լավ տղերք ես:

— Յես համոզված եմ, վոր դրանք կկարողանան գործ կատարել: Ուրեմն այդպես, Սամսոն, յես մեծ հույս ունեմ ձեզ վրա, իբրև գիտակից աշխատակցի... Մալխի մեկին անպատճառ պետք ե կայացնենք ընդհանուր ժողովը... Աշխատեցեք առաջժմ այս ամենը գաղտնի պահել: Սեբեա շները հոտոտում են ողբ, ատամները սրում են...

— Ո՛ւմ վրա յես կասկածում:

— Քո դրացի Ստեփանի:

— Ճիշտ. յես լսեցի ձեզ հետ տեղի ունեցած դեպքի մասին: Ի՞նչպես ե գնում գործը:

— Յես ու Ստեփանը թշնամի յենք իրար... Ասում ե, թե Վլես, պետական ազնվականս, աղջկա չեմ ամուսնացնի մի անկարգ յերիտասարդի՝ Գենոյի հետ: Զգիտեմ ինչպես վարվեմ. յեթե աղջիկն ինձ չսիրեր, յես մի կերպ կտանեյի, ձեռք կքաշելի նրանից,

բայց նա տանջվում է, ու չես ել մեղքանում եմ: Բացի դրանից, բանից դուրս ե գալիս, վոր նրա վայրենի հայրն իմ վրեժը նրանից ե հանում, ամեն որ ծեծում ե: Յերկու որ առաջ Բարաբաձեյի շուկայում դռարնվող խանութի մոտոմը եյի անցնում: Խանութից հարմոնիկայի ձայն եր լսվում և աղմուկ: Ներս նալիցի ու տեսա Ստեփանին, դուղապետ Յազորին, Շուրյադնիկ՝ Վարդենին և ուրիշներին, վորոնք բոլորն ել սաստիկ հարբած ելին: Ստեփանն իր հարմոնիկային եր ուժ տալիս, իսկ միացածներն ալլանդակորեն գոռում եյին: Ինձ տեսան. . սկսեցին հրավիրել... Յես, ինչ ասել կուզի, մերժեցի: Այն ժամանակ Ստեփանը դադարեցրից յերաժշտությունն ու թունալից ձայնով գոռաց իմ հասցեկին.

—Ե՛յ, սոցիալիստ, մեր փեսա, հին ագռավ, չլի՞նի մեջքդ քոր ե գալիս, ուզում ես մարակներ ուտեցնեմ:

Այդ խոսքերի վրա մյուսները դառնութեամբ ծիծաղեցին, իսկ իմ գլուխը պտուլտ եր գալիս և չեյի գդում, թե ինչպես եյի ման գալիս: Հետո տեղեկացա, վոր նրանք իմ դեմ ինչ-վոր դավադրութուն են պատրաստում:

Յես ալլես չեմ հիշում, թե հետո ինչի մասին խոսեցին հայրս ու Գինոն: Յերբ հետեյալ որը զարթնեցի և հիշեցի հորս ու Գինոյի խոսածները, ամաչեցի: Ամաչեցի այն պատճառով, վոր մանկական բնությունը հաղթել եր ինձ ու զրկել ինձ դուրեկան խոսակցությունը լսելուց...

## V

Մայիսի մեկ... Յէրբ և գալու մայիսի մեկը...  
Ինչո՞ւ յեմ լերեկա ու ինչո՞ւ յես ել չգիտեմ որերի  
համարքը, վորպեսզի հաշվեմ, թե ինչքան ժամանակ  
և մնում մինչև մայիսը:

Մայիսի մեկ... Յես յերազում եմ մայիսի մեկի  
մասին, ու թրթռում ե մանկական սիրտս: Ինչո՞ւ Յե-  
րեի աչն ժամանակ մի կախարդական տեսարան կը-  
բացվի: Յերեի աչն ժամանակ արեն ավելի կարմիր  
կլինի և շրջապատն ել ավելի ևս վռսկեզոծված: Յերեի  
գլուղն աչն ժամանակ ավելի ժպտուն կլինի և հան-  
դիսավոր կերպով իր բազուկները կբանա ամենքին  
գրկելու համար:

Մայիսի մեկ... Յես յերազում եմ այդ որվա մա-  
սին, և թրթռում ե մանկական սիրտս:

Անցնում եյին որերը, բաց աչդ որերը, ինչպես  
հիմա յե միտս գալիս, լիքն ելին մի ինչ-վոր փոթոր-  
կից բերված ձայներով: Այդ ձայների գալու հետ միա-  
սին ուժեղանում եր շարժումն ու աղմուկը գյուղում,  
վորը կորցնում եր իր նախկին հանդարտութունն ու  
դույնը:

Գյուղացիք այժմ ավելի հաճախ եյին հավաքվում  
Գենո Գոփոձնի բակի դռան մոտ, և Գենոն ել լեր-  
բեմն լրագիր, լերբեմն ել ուրիշ ինչ-վոր թղթեր բռնած  
ձեռքում՝ կանգնած եր լինում գյուղացիների մեջ, ինչ-  
վոր կարդում եր նրանց համար ու բացատրում հետա-  
քրքրութունից վզները յերկարացրած ու մի ձեռքն  
տկանջին դեմ տված գյուղացիներին:

Հայրս ել համարյա բոլորովին ընդհատեց աշ-

խատանքի գնալը և իր ժամանակի մեծ մասը գործ  
 եր դնում գաղտնի ժողովներ այցելելու և ինչ-վոր գըր-  
 քեր կարդալու վրա: Գյուղացիք ել դադարեցին արտեր,  
 անտառներ ու այլ աշխատանքի գնալուց և համարյա  
 բոլորն ել զբաղվում էին գյուղ չեկած լուրերի մասին  
 դատողութուններ անելով: Յեւ այդ լուրերն ել մի ինչ-  
 վոր կախարդական փոթորկի փշրանքներ եյին միայն:

Գյուղացիների մեջ լսվում էին՝

— Հեղափոխություն...

— Մոցիալ-դեմոկրատիա...

— Հանրապետություն:

Յես այն ժամանակ ծնողներիցս լսել էյի, թե  
 ինչ են նշանակում հեղափոխությունն ու սոցիալ-դե-  
 մոկրատիան, բայց չգիտեյի, թե ինչ բան եր հանրա-  
 պետությունը:

Որերն անցնում էյին, և չես սպասում էյի մա-  
 չիսի մեկին:

Մի առավոտ, լերը արեւ դուրս ընկալ թախծոտ  
 անտառից և ճառագայթն պսակի պես կանգնեց նո-  
 րահարսի նման զուգված գյուղի գլխին, ինչ-վոր մի  
 մարդ խելագարի պես վազեց զանգակատուն և սկսեց  
 զանգահարել...

Զգացմունքները բաց արին իրենց. թեւերը և  
 զանգի զողանջման հետ միասին ձուլվեցին կեն-  
 դանարար շրջապատի հետ:

Յերեակայությունն իր սիրով լի կրծքով փարեց  
 գյուղին՝ նրան համբուլը տալու համար:

— Ե՛յ, դու, սիրելի չեղբայր, վոր այդպես խճեկ  
 ես մորուքդ ու ցնցոտիներ հագել և այժմ ուրախ ծի-  
 ծաղում ես, արի, համբուրի՛ր ինձ...

— Ե՛յ, դու, սիրելի՛ քեռի, վոր ակոսներով ես ծածկել դեմքդ ու անժամանակ ձերացել, ի՞նչն ե հիմա քեզ այդպիս ուրախացրել... Մոտեցիր, համբուրի՛ր ինձ։

— Ե՛յ, դու սիրելի՛ բարեկամ, վոր աղեղի պես կլորել ես մեջքդ ու անչափ տանջվել, ի՞նչն ե արդիոք այժմ աչքերիդ այդ գոհունակության փալլը տվել... Մոտեցիր, համբուրի՛ր ինձ...

— Ե՛յ, դու, իմ սիրելի՛ ընկեր, վոր միշտ առանց գլուխդ բարձրացնելու կռիվ ես մղել պտղաբեր սև հողի դեմ և վոր քեզ համար, բացի նրա կոշտ սրտից, ուրիշ վոչ մի բան գոցութուն չի ունեցել աշխարհիս յերեսին, ի՞նչն ե արդյոք ստիպել քեզ խոսել... Մոտեցիր, համբուրի՛ր ինձ...

— Ե՛յ, դու, իմ սիրելի, իմ տանջված, բայց անհողդողդ գյուղ, դժու, վոր շատ անգամ ես ավերվել ու նորից ծաղկել, շատ տանջանքի ու նահատակության վկա չեղել, վոր Վրաստանի յերջանկության ու դժբախտության պատմագիրն ես, գեղեցիկ ես, սքանչելի, հպարտ ու անընկճելի... Ասա ինձ, ինչ՞իս յե այսոր ալիքան վողկորված թրթռում սիրտդ... Մոտեցիր, համբուրի՛ր ինձ...

— Ա՛յ տղա, այսոր կոփվում ե ժողովուրդների ու մեր բախտը... Այսոր ծնվում ե մեր մեջ բոլորովին ուրիշ տեսակի կրակի վոգի, և մենք ամենքս կռիվ ենք մղում մի բոլորովին ուրիշ հավատով... — պատասխանում են ինձ մեծ ու փոքր, կին ու տղամարդ, ծառ ու բույս, շնչավորներ ու անասուններ և չես, գեռես մի յերեխա, աղոթում եմ նրանց համար։

— Որհնչա՛լ լինե՞ք միշտ դուք, տղամարդիկ ու կանայք, մեծեր ու փոքրեր, ծառեր ու բույսեր, շըն-

չավորներ ու անասուններ, յերկինք ու գետին, վորովհետև դուք չեք նմանվում մի կանգնած ու հոտած ճահճի, այլ ունեք գետակի պես հոսող, սիրով ու հուսով լի մի հողի, վորը մշտապես շարժվում ե, շարունակ գեպի առաջ ե ձգտում ու տենչում ե հասնել մի վորևե բանի, հեռանալ մի սառած կետից...

Ջանգերի ղողանջունը լսելուն պես տեղից վեր կացավ ամբողջ գյուղը և ամենքը, մեծ ու փոքր, շտապեցին յեկեղեցու մոտ գտնված դաշտի կողմը:

Մի փոքր ժամանակից հետո այդ դաշտը հազիվ եր տեղավորում մոտակա դյուղերից յեկած անհամար մարդկանց: Մենք, յերեխաներս, թռչկոտում եյինք ժողովրդի մեջ և սրտատրոփ նայում այն կարմիր դրոշակին, վորը հպարտությամբ ծածանվում եր շինված ամբիոնի վրա ու մի տեսակ վոգեորությամբ խաղում հովի-թևերի հետ:

Հենց այնտեղ, դաշտի մի ծառի տակ կանգնած ելին պրիստավը, գյուղապետ Յագորը, «ուրյադնիկ» Վարդենն իր «ստրաժնիկներով» և մուգիկանա Ստեփանը: Յես նրանց խոսակցությունը չելի լսում, բայց նկատում էլի, վոր նրանց անչափ գոռոզությունը կոտրվել եր, մտրակները կորցրել ելին իրենց ուժը, ուսադիրները խունացել ելին:

Բայց զանգերը դեռևս ղողանջում եյին, և ծով-ժողովուրդը դեռևս աղմկում եր, չերբ հանկարծ ամբիոնի վրա յերևաց Գենոն և... ընդհատվեց զանգերի ղողանջունը, ընդհատվեց աղմուկն, ու ամենքը սրեցին իրենց չսելիքը, վորպեսզի լավ լսեն իրենց շահերը պաշտպանող հեռուորին:

Շատ խոսեց Գենոն. և յերբ նա իր ճառն ավար-

տեց, ծափերն ու կեցցեները ծածկեցին տարածու-  
թյունը:

Յերկիրը տոնում եւ իր տարած հաղթանակը, և  
լերջանիկ արևն ավելի ևս սիրով եր բաց անում իր  
աչքերն ու փայփայում ուրախացած բազմությունը:

Գենոյից հետո խոսեց մի ինչ-վոր յերկար մա-  
զեր ունեցող անծանոթ մարդ: Նա հագած ունեւր բլուզ,  
վորը կապել եր փնջավոր մի ժապավենով, գլխին  
կրում եր յեվրոպական շապա: Հետո յես տեղե-  
կացա, վոր նրան Քուլթայիսից եյին ուղարկել իբրև  
ազիտատորի:

Ազիտատորի ճառի ավարտելուց հետո նորից լըս-  
վեցին ծափեր ու կեցցեներ, և ամենքի դեմքերը վառ-  
վեցին վոպեորությունից: Հետո խոսեցին իվանեն,  
Նեստորը, հալրս և մի ուրիշ անձ, վորոնց ճառերն  
ու կոչերը դարձյալ խանդավառությամբ ու ծափա-  
հարությամբ եր դիմավորում բազմությունը:

Վերջն ամբիոնի վրա յերևաց դարձյալ Գենոն ու  
ասաց.

— Քաղաքացիներ, այսորվանից մեր գլուղում  
տապալվում ե Նիկոլայ թագավորի գահը: Իշխանու-  
թյունն անցնում ե հենց իրա՝ ժողովրդի ձեռքը... Այդ  
պատճառով մենք պետք ե ընտրենք հեղափոխական  
կոմիտե, տասնապետներ ու հարյուրապետներ և հիմ-  
նենք ժողովրդական դատարան: Միաժամանակ պետք  
ե կազմակերպենք նաև կարմիր զորախումբ:

Ժողովն այդ խոսքերն ել ընդունեց ծափերով և...  
թռչկոտում եյինք մենք, լերեխաներս, թռչկոտում ե-  
յինք և ուրախանում այն պատճառով, վոր մեր գլուղի  
կյանքում կատարվում եր այնպիսի մի լավ, անսովոր

բան, վորը պետք է ուրախացներ ու յերջանկացներ ամենքին: Թռչկոտում ելինք մենք, յերեխաներս, խաղում ու միաժամանակ յերգում. «Նիկոլայ յերկրորդը զառնալու չե խոզարած» և այլն:

Հետո մենք տեսնում ելինք, վոր տալիս ելին միքանի ծանոթ ու անծանոթ գլուղացիների անուններ, և այդպիսով կատարվում ելին հեղափոխական կոմիտեյի, տասնապետների և մյուսների ընտրությունները:

Վերջը հերթը հասավ կարմիր զորախումբ կազմակերպելուն... Վինտովկաներով զինված մոտ քսան յերիտասարդ բաժանվեցին բազմությունից ու հավաքվեցին առանձին: Նրանց կողքով անցավ Գենոն, ինչ վոր խոսքեր արտասանեց, և նորից ծափերի ու կեցցենների գոռոցը ծածկեց տարածությունը: Նա մեկ-մեկ գրկեց զորախմբի բոլոր անդամներին ու դրսնով նորից վոպեորեց ծով-ժողովրդին:

Մինչ այս, մինչ այն, յերեկոն ել վրա հասավ, և Գենոն, վորի դեմքի վրա հոգնածություն եր նկատվում, նորից դիմեց ժողովականներին.

— Ընկերներ, բոլոր հարցերն սպառված են: Այժմ մեզ մնում է միայն ցանկալ նոր զուլդացիական իշխանություն, վոր նա պարզերեսությամբ ի կատար ածե այն բոլոր պարտավորությունները, վոր դնում է նրա վրա հեղափոխությունը... Սրանով չես ժողովը փակված եմ հայտարարում:

Յեվ ցրվելու համար պատրաստված բազմությունը խմբերի բաժանվեց ու նոր հեղափոխական յերգերով ուղղվեց դեպի տները:

Կարմիր գորախումը Փրիդոնի վորդի Պետրիայի  
տված մի ինչ-վոր նշանով սկսեց լերգել:

Վայ Ալիխանովին \*),

Սաեկի Ալիխանովը,

Թող ցա իր գլուխը

Դիպցնի սեվ քարին...

Յերգում ելին ու առաջ շարժվում:

Գենոն, անծանոթ ազիտատորը, հայրս, նեստորն  
ու ուրիշներն ուրախ խոսակցությամբ ու գոհունակու-  
թյամբ գնում ելին նրանց յետևից:

Յես լեա մնացի և տեսա, վոր պրիստավը,  
գլուղապետ Յագորը, ուրյադնիկ Վարդենն ու մուզի-  
կանտ Ստեփանը կանգնել ելին լուռ և վհատված սըր-  
տով նայում ելին ուրախ-ուրախ դեպի տուն ուղղվող  
բազմությանը:

## VI

Ժամանակն անցնում եր:

Միության կախարդական վողին բաց եր անում  
իր թևերը և ինչ-վոր կենդանարար շունչ եր տալիս  
գլուղացությանը:

Գենոն հանգստություն չունեիր... Նա մերթ ապի-  
տացիա լեր մղում, մերթ այս ու այն գործի յետևից  
ման գալիս, մերթ բակի դռան մոտ հավաքված գլու-  
ղացիներին զանազան բացատրություններ տալիս:

Պրիստաֆը ու նրա համախոհները պոչերը ցած  
թողած շների պես ման ելին գալիս գլուղում լուռ ու

---

\*) Յարակա իշխանության կողմից արևմտյան Վրաստանն  
ուղարկված սև գեներար:

անխոս: Այժմ գյուղացիք չեյին վախենում նրանցից, վորովհետև տեսնում եյին, վոր նրանց մտրակները ուժըն անցել եր, ու նրանց ուսադիրները խուսացել եյին:

Գյուղապետ Յազորը մերթ մի տեղ եր մտնում, մերթ մյուս: Այնպես եր ցուլց տալիս, թե իբր ինքն ել ժողովրդի կողմն եր, միության համար վորևե գործ եր կատարում, բայց ամենքն ել զիտեյին, վոր այդ շողոքորթ, խարդախ մարդն անմիջապես թշնամիների կողմը կանցնէր, հենց վոր հանդամանքները փոխվեյին:

Գյուղը կառավարում եր հասարակության կողմից ընտրված կոմիտեն, վորի նախագահն եր Գենոն, և վորին հպատակվում եյին տասնապետներն ու հարյուրապետները:

Գյուղացիների մեջ հանդես չեկող բոլոր վիճելի հարցերը քննության եր առնում գյուղական դատարանը, վորի նախագահ եր ընտրված հայրս:

Գենոն հեքիաթային դէի նման աճեց ու մեծացավ բոլորի աչքում, և ամենքը—մեծ թե փոքր, կին թե տղամարդ—նրա անունն եյին տալիս:

Այդ ժամանակ հաճախ հյին կազմակերպվում ժողովներ; և յես հաճախ, այդ ժողովներին զնալիս, տեսնում եյի Յուզալային: Նրա դիմքը դարձյալ դժգույն եր, բայց և աֆնպես յես նկատում եյի, վոր լերբ ամենքը գովում հյին Գենոյին, նրա աչքերն արշալուսի պես փայլում եյին:

Ինչ՞ա: Յերևի այն պատճառով, վոր հրեղեն ձին սլացնում եր նրան սիրո վարդագույն տարածության մեջ:

Յես չգիտեյի, թե ինչ եր մտածում այն ժամա-

նաև Ստեփանը, բայց մի որ, յերբ մենք «ճակուռորա» խաղը վերջացրինք, Ղուտուան, տեսնելով փողոցով անցնող Գինոյին, սկսեց.

— Գիտե՞ք ինչ կա, տղերք, լես աշխարհիս լեռնաին վոչվոքի աշնպես չեմ ասում, ինչպես աղբանալիտան Գինոյին... Այդ ստոր մարդն ինչ-վոր մի միտլթյուն ու աղատություն հնարեց ու ամբողջ գյուղը տախնուվրա արեց... Հենց ինքը բազմեց թազավորի գահի վրա... Հետո ինչքան ե ուռել-փքվել, գիտեք, տղերք: Տեսեք, թե ինչ լուր ե ուղարկել այս որերս հորս.

— Ստեփան Ավալիանի, մի անգամ և ընդմիջտ հայտնում եմ քեզ, վոր լես սիրում եմ Յուլյայային, ուստի դու նրան վոչ մի նեղություն չպետք ե տաս, թե չե շորերդ կհանեմ ու այնպես աղամամերկ ման ածել կտամ գյուղում:

Դուք մի տեսեք, վոր այն գետինը մտած Յուլյայան ե Գինոյին խորհուրդ տվել այդպիսի մի լուր ուղարկելու հորս... Այդ որից սկսած, հայրս ման ե գալիս ահանջները կախած եջի նման... Ասում ե, թե ի՞նչ իրավունք ունի այն անարդ մարդը մեր տան ներքին գործերին խառնվելու... Բայց ի՞նչ կարող ե անել: Այն որից հետո վատ խոսք անգամ չի ասել Յուլյայային: Նույնիսկ չի արգելում նրան ժողովներ գնալ... Յերևի, իրոք, վախեցել ե Գինոյից, բայց նա իր սրտում առաջվա պես հայհոյում ե Գինոյին ու հաճախ ասում տանը.

— Ի՞նչքան ե անհանգստացնում ինձ աղբ իմ նախկին ճորտի աղան... Բայց քնաս չունի, յերևի կըգա մի որ, յերբ լես հնարավորություն կունենամ փոխարենը հատուցանելու:

Ահա այդպէս ե խոսում հայրս, և մենք ել դրան,  
այդ Գենո յե, թե ինչ զահրումար—սաստիկ ատում  
ենք, ատում, ինչպէս մի ժանտախտ,—ավարտեց իր  
խոսքը Ղուտուան և իր զանգի նման հնչուն ձայնով  
լերգեց.

Միությունը մեզ համար մի գահ ե,  
Իսկ քեզամիների համար—կախադան...

Յեւ մեր մյուս ընկերներն ել ձայնակցեցին նը-  
րան:

Իսկ յես այսպէս ելի մտածում.

— Ստեփանի գողողության թևերը կտրտվել են  
և, յերևի, այդ պատճառով ել ուրախ ե Յուցայան այս  
վերջին որերս, ու ավելի գրավիչ ե նրա ժպիտը սիրո  
արևի ու լուանի ազդեցության տակ...

## VII

Մի որ կոտրված զանգի ձայնի պես հնչեցին դյու-  
ղում այս խոսքերը.

— Կազակները յեկել են...

Այդ լուրը սարսափեցրեց ամենքին:

Մթթե ճիշտ ամենքին: Վոչ...

Սարսափել ելին միմիայն կանաչք ու ծերունի-  
ները, իսկ հեղափոխական չերիտասարդությունն ամե-  
նեին նշանակութուն չեր տալիս դրան և առաջվա պէս  
շարունակում եր յերգել.

Նիկոլայ յերկրորդը

Դառնալու յե խոզաբաժ...

Բայց և այնպէս, տարածության մեջ սլանում  
եին զարհուրանքով տոգորված ձայներ.

— Մեր ազատութիւնը կ'սլեն...

— Մեզ կձերբակալեն...

— Ամենքիս կ'կոտորեն...

— Մեր տները կ'հրդեհեն...

Յեւ, յերբ այդ լուրի տարածվելու հետեյալ որը շնչում եյին, թե «վաղը անտառում, Կուխա-Ոնճկուրայի մեջտեղում գաղտնի ժողով ե նշանակված, և վոչ-վոք չպետք ե բացակա լինի», — չես գլխի ընկա, վոր կազակների գալն ալնալիսի մի հանաք բան չի լեղել, ինչպես այդ շառերին թվում եր:

Յերկրորդ որը լուսացավ:

Փայլուն որ եր ու գեղեցիկ առավոտ...

Զվարթ եր բնութիւնը, ուրախ՝ գետինը:

Բայց, չնայած դրան, գլուղացիների խոսակցութիւնն ավելի հանդարտ եր ու զսպված, ավելի գաղաադողի ու վհատված... Ու չես ել մտածում ելի — յերեկի աջնքան ել հեշտ բան չի լեղել կազակների գալը, ինչպես կարծում ելին վոմանք:

Գլուղացիք գնում ելին գեպի Կուխա-Ոնճկուրա...

Նրանք միմյանց շնչումով հաղորդում ելին իրենց իղձիրն ու լենթադրութիւնները:

Ահա յերեաց նաե կարմիր զորախումբը Փրիդոնի վորդի Պետրիայի առաջնորդութիւմբ: Նա գինված եր վինտովկաներով և նույնպես շարժվից Կուխա-Ոնճկուրայի կողմը:

Սակայն այդ ինչիցն ե, վոր նրանց դեմքերին չի նկատվում նախկին չեռանդն ու վոգևորութիւնը: Ինչի՞նչ են նրանք այդպես դոմեշների նման դանդաղաքայլ շարժվում...

Մենք, յերեխաներս, հավաքվիցինք Դաթիկոյենց

բակում ու, տեղերիցս շարժվելուն պես, սկսեցինք յերգել այն ժամանակվա հեղափոխական լերդերը և ուղղվեցինք դեպի անտառ, դեպի Կուխա-Ոսնճկուրա:

Յես մի փոքրիկ, փայտի վրա ամրացված կարմիր շապիկ ունեյի ձեռքիս բռնած և այդպես եյի առաջնորդում մեր խմբին... (Այդ այն պատճառով, վոր լես ինձ խմբի առաջնորդ եյի համարում):

Բայց հենց վոր մենք մոտեցանք անտառին, մեր առաջը կտրեց մի կարմիր ռազմական ու ասաց.

— Յետ դարձեք... Այսոր լերեխաներին չեն թույլ տա միտինգում լինել...

Այդ կարդադուլթունը կատարելապես հուսահատեցրեց մեզ:

Հիասթափված յետ դարձանք: Հավարվեցինք նորից Դաթիկոյեց լալն բակում և սկսեցինք պարսատիկով քարեր շարտել դեռ ուղեւ: Պարսաքարեր եյինք նետում թե ծտերի և թե վառիկների վրա:

Մոտեցավ կեսօրը...

Արեւ կանգնեց լերկրի գլխին մի ահագին կրակե անձրևակալի պես, և ամառվա տառնց այն ել կարմրատակած թշերն ավելի ևս վառվեցին...

Արեւ սաստիկ կիզիչ էր, և յերկրի սիրտը ձգտում էր դեպի նա՝ զգվելու և համրուրելու համար:

— Տղերք, մի տեսեք, ի՜նչ փոշի լե բարձրացել այն կողմը, փողոցում,— բղավեց հանկարծ Դաթիկոյն և մեր ամենքիս հալացքն ուղղվեց փողոցի կողմը:

Փողոցի վերջում, մեր գտնված տեղից մոտ մի վերստ հեռու, նկատեցինք մի փոշե ամպ, վոր հետըզհետե մոտենում էր մեզ, և վորը շուտ-շուտ ցրում էր քամին:

Միքանի բոլոր ել, և պարզ տեսանք ձիերին...  
 Ձիերի վրա հեծել ելին չուխավոր, փափախավոր ու վոտ-  
 քից մինչև զլուխ զինված մարդիկ:

— Տղերք, դրանք կազակներ են,— բացականչեց  
 Ղուտուան, և մենք ել սաստիկ վախեցած նայում ելինք  
 յեկողների վրա:

— Մարդ ասի՝ Քւր են գնում...

— Գուցե՞ Կուխա-Ունճկուրա...

— Գուցե՞ Ժողովը ցրելու համար...

— Գուցե՞ կարմիր ռազմականներին կոտորելու...

— Գուցե՞ Գննոյին ու նրա ընկերներին ձերբա-  
 կալելու...

Սյուպիս ելինք մենք, ընկերներս, իրար հարցը-  
 նում ու ահից դողդողում գունատված...

Կազակները մոտեցան մեզ: Նրանց առջևից գալիս  
 ելին պրիւտաձե ու գլուղապետը: Նրանց հետ եր նույն-  
 պես Ղուտուայի հայր Ստեփանը՝ ձիու վրա գոռոզ-գո-  
 ռոզ նստած:

Հորը տեսնելուն պես Ղուտուան գունատվեց...  
 Նրա դեմքը ծումովեց, և նա կծեց իր շրթունքը: Ինչհետեւ  
 Յերեկի զգաց մի ինչ-վոր սարսափելի ուժ: Յերեկի մի  
 ինչ-վոր վատ բան զգաց իր հոր վերաբերությամբ...  
 Յերեկի ամեն բան հասկացավ նոր սթափված Ղու-  
 տուան և... գալլի աչքերով սկսեց նայել իր հորը: Կար-  
 ծեա իր աչքերով ուղում եր ասել նրան.

— Հայրիկ, իմ լավ հայրիկ, դու ի՞նչ գործ ունես  
 այդ մարդկանց հետ: Ձե՞ վոր դրանք ժողովրդի թշնա-  
 միներ են: Ուրեմն դու ի՞նչ գործ ունես դրանց հետ...

Յեվ, յերեկի, այն ժամանակ գլխի ընկավ Ղուտուան,  
 թե ինչու յեր իր հայրն այնքան հաճախ լինում պրիւ-

տավի ու գլուղապետի մոտ: Գլխի ընկավ, թե ինչու  
յեր նա միշտ հայհոցում Գինոյին ու միությունը: Գլ-  
խի ընկավ, թե ով եր լեղել իր հայրը... Գլխի ընկավ,  
թե ինչպես սխալվում եր ինքը, կուրորեն հավատալով  
հորն ու հայհոցելով Գինոյին և...

Գալլի անքերով սկսեց լափել նա իր հորը, վսրը  
գոռողաբար բազմել եր ոռւսական տհազին ձիու վրա  
և ուրախ-ուրախ ծիծաղում եր:

Կաղաղները կանգնեցրին իրենց ձիերը, և գյու-  
ղապետն ել քաղցր ձայնով գլմեց մեզ.

— Զավակներս, վճռեցի եմ ձեր հայրերը...

— Զասեք, տղերք,—կամաց ասաց մեզ ամենքիս  
Ղուտուան, բայց այդ ժամանակ Կվերկվիզե Ճավճա-  
նիձեն ասաջ ընկավ ու շուտ-շուտ ասաց գլուղա-  
պետին.

— Անտառումն են, Կուխա-Ոնճկուրայի մեջտե-  
ղում... Ժողով ունեն այնտեղ, հայրս ել այնտեղ և...  
Բայց դուք լինձ եք ուղում, վոր գնում եք այնտեղ...  
Քեռի, այս կաղաղներն ինչո՞ւ չեն այնտեղ գնում... Մի  
գուցե կովեղձ յեք գնում այնտեղ... Քեռի, ինչո՞ւ յեք  
գնում այնտեղ...

— Այդ մեր գործն է, տղաս,—պատասխանեց  
գլուղապետն, ու ձիավորները խթանեցին ձիերին...

— Ա՛յ տղա, Կվերկվիզե, այդ լինձ արիւր մեզ,  
ինչո՞ւ ասացիր,—հարձակվեցինք մենք ամեն կողմից  
փոքրիկ կաավի պես կուչ լեկած Կվերկվիզեյի վրա...

— Ո՛հ, մայրիկ,—ճչաց հանկարծ Կվերկվիզեն,  
գլխի ընկնելով, վոր ինքը մատնիչի դեր է կատարել:

— Բայց քնաս չունի, չես կուղղեմ իմ արած ըս-  
խալը,—ավելացրեց Կվերկվիզեն և վրա ընկավ Կու-

տայի լայնտեղեկեթ արածող «Քորա» ձիու վրա և մի տկնթարթում թռավ նրա մերկ մեջքին...

— Տղերք, յես կուղղեմ իմ արած սխալը... Յես ժողովին կզգուշացնեմ,—ասաց նա մեզ վերևից և, ձիու բաշը պինդ բռնած, աքացեց նրան, ու Քորան ել իր ամբողջ թափով սլացավ...

— Ի՞նչ կպատահի:

— Արդյոք կընդհարվե՞ն:

— Արյունհեղություն կլինի:

— Գուցե կվերկվիղեյին աշողվի կազակներից առաջ թռչել ժողով:

— Կկարողանամ արդյոք զգուշացնել ժողովականներին:

— Կկարողանամ արդյոք փրկել Գենույին ու նրա ընկերներին:

Այդ հարցերն ելինք մենք, լեբեխաներս, տալիս իրար և միաժամանակ հպարտանում, վոր մեր ընկեր կվերկվիղեն անձնազոհություն և անուժ, հերոսական գործ և կատարում:

Ամբողջովին աչք դարձած, նայում ելինք կվերկվիղեյին, վորը քամու պես սլացնում եր իր Քորային:

Գլխաբաց, վոտաբոբիկ, շապիկ ու վարտիկ միայն հագած, կվերկվիղեն նմանվում եր ողբի մեջ սլացող մի սատանի ճուտի, վորը հափշտակված եր մի տենչով միայն—կազակներից առաջ թռչել անտառ և քավել իր ազամա մատնության հանցանքը:

Քորան հետզհետե անցավ տարածությունը, հասավ կազակների ձիերին ու, իր ամբողջ ուժը լարելով, իր լետեում թողեց նրանց: Սլանում և Քորան ու ա-

ուշ տանում իր վրա հեծած անձնուրաց տղային, վորը նմանվում է այժմ մի կատաղած սատանի ճուտի...

— Այդպես, այդպես, սիրելի՛ սատանի ճուտ, սլացի՛ր, առն՛ջ անցիր, չե՞ վոր դու ակամա կատարեցիր մատնությունը... Ուրեմն թո՛ւր, մի՛ խնայիր կլանքդ, դժբախտ տղա, սլացի՛ր, ի՞մ սիրելի սատանի ճուտ, ի՞մ սիրելի փոքրիկ հերոս: Դու ել թո՛ւր, բազելին նմանվող Քորա, չե՞ վոր քո յերակներումդ ել յերիտասարդական արյուն է հոսում... Ուրեմն չընկճվես, Քորա, ազատիր քո սիրելի սատանի ճուտին ամոթից ու դավաճանի անունը կրելուց: Առաջ գնա բազելից ու արծվից ել ավելի արագ...

Սակայն այդ լճնչ է պատահում... Մի կաղակ ճըչաց իր ձիու վրա ու Քորայի լիտեից ընկավ: Ինչո՞ւ: Յիրևի բռնավորները կռահեցին սատանի ճուտի ոտարոտի սլանալու պատճառը... Յերևի այդ նենգավորները հասկացան սատանի ճուտի հերոսական անձնուրացությունը...

Յեվ սլանում է դարձյալ Քորան բազելից ել արագ, և հետևում է նրան կազակի ձին անդդից ել ավելի արագ:

Հրեն Քորան արդեն անցավ ահագին ճանապարհը, հրեն Քորան մի յերկու բոպելից հետո կծածկվի անտառում և զգում է, վոր կազակի անդդը չի կարող հասնել իրեն, բազելին: Զգում է կազակը, վոր խաղճխալտառակ պետք է լինի, ուստի և վիստովկան առնում է ձեռքն ու նշան դնում այդ վայրենին՝ հերոս, անձնուրաց սատանի ճուտին...

Ու Թրաքեց հանկարծ հրացանը, և մի փոքրիկ խաղաղնդի պես գետին գլորվեց սատանի ճուտ — կվերկվիդեն...

Յեւ վ ցնցվեց ամբողջապես փրփուրով պատած Գորան: Արջան ու ամոթի բծերով ծածկվեց արևը... Հաց յեղավ Գորան ամբակները դետնին տալով և հեկեկաց դեղեցիկ ընուլթյունը... Վողբացինք մենք, յերեխաներս ել, անասելի կսկիծով...

Կաղակը նաչեց խաղաղնդի պէս գետին գլորված Կվերկվիդելի վրա և սպասեց յետ մնացածներին: Դրանք կանգ առան մի փոքր ժամանակ սատանի ճուտի շուրջը... մի ինչ-վոր խորհրդակցություն ունեցան և, ձեռքները թափահարելով, առաջ ընկան:

Իսկ մանկասպան կաղակն ու իր անզդ-ձին հրպարտորեն առաջ ելին դնում, վորպես պատերազմից հաղթանակով դուրս յեկածներ...

Յեւ մենք ել վաղելով դնացինք անձնագորհի կողմն ու տեսանք արջան մեջ լողացող, սիրտը ծակած Կվերկվիդելին...

Յեւ բարձրաձայն վողբացինք մենք, յերեխաներս, դողում ելինք տհից, և վողբաց նաև գետինն ի տես այդ դժբախտության...

— Սատանի՛ ճուտ, իմ սիրելի սատանի՛ ճուտ, այդ դժւ զոհվեցիր, այդ քեզ սպանեցին զգվելիները...

— Ընկերներ, յերգվենք հենց այստեղ, այս նընջեցյալի առջև, վորմեր վրիժը կլուծենք նենգ թշնամուց... Այսորվանից թող մեզանից յուրաքանչյուրը կենդանի վրեժի վերածվի... Թող այդ վրեժխնդրությունը մինչև մեր մահն ուղեկցի մեզ... Յիրգվենք, ընկերներ...

Յեւ մենք յերգման խոսք տվինք իրար, վոր վըճարել կտանք թշնամուն սատանի՛ ճուտի արջան փո-

խարեն... վոր թշնամուն կստիպենք զղջալ իր անըզ-  
գամության համար...

Այդ յերգումից հետո Կվերկվիկեյի սառած դիա-  
կը տարանք գյուղ, և հառաչեց, հեկեկաց ու վողբաց  
սարսափած գլուղը...

Կվերկվիկեյի մայրը, քույրերն ու յեղբայրները,  
մազերը փետելով, ճչում ելին խելագարի պես ու հայ-  
հոյում անգութ թաստունն ու յերկնքին...

#### XIV

Դեռևս գյուղը չեր ավարտել իր վողբը Կվերկվի-  
կեյի սպանման առիթով, վոր անտառից լավեց հրա-  
ցաններ խուլ ձայնը:

Բոլորս ել զգացինք վերահաս դժբախտությունը  
և սրտատրոփ նայում եյինք դեպի անտառ տանող  
փողոցին:

— Ի՞նչ ե պատահել:

— Ընդհարվել են:

— Արյունհեղությունն ե յեղել...

Հարցնում եյինք իրար գունատված ու հեալով:

Բայց չանցավ միքանի վայրկյան անգամ, վոր  
ամեն կողմից գյուղը թափվեցին, ցրիվ յեկող վոչխա-  
րի հոտի պես, գլուղացիք ու կարմիր մարտիկներ:  
Ամենքն ել ծեծված ու արյունոտված եյին:

Ջարհուրելի տեսարան եր. Դաթիկոյի հայր Կոս-  
տայի գլուխը ճեղքվիլ եր թրի կոթի հարվածից, և  
արյունով ելին ներկվել նրա բեղերն ու մորուքը: Փի-  
րանի վորդի Վանոյի կուռը կոտրել ելին հրացանի  
կոթի զարկով, և նա կախ եր ընկել մարակի պես:  
Ամբրոսիի վորդի Սերափիի վոտը տեղից դուրս եր

ընկել մի փոսի վրայով թռչելիս, և հազիվ եր կարողանում շարժվել, յերկու փայտի հենվելով ու անիծելով սլառաճառ լեղողներին: Թեղորի վորդի Պրոկոփի մի աչքն արյունոտվել էր, և նա, սարսափելի ցավից տառապելով, գոռում եր գաղանի պես...

Մնացածներն ել համարյա այդպես ելին ծեծված ու վիրավորված և կատաղությամբ կամ դառը վշտով բերանները բաց եյին անում, աչքերը վառում վրեժխնդրությամբ:

— Մատնեցին մեզ...

— Դավաճանեցին...

Հսկում ելին ձայներ, և յերբ յեկողները տեղեկացան Կվերկվիզելի կատարած ակամա մատնության և հետո ել անձնազոհության մասին, յերկուղածությամբ ծունկ չոքեցին նրա արյունով ներկված դիակի առջև: Ասենքն ել հարգանքով հիշեցին փոքրիկ հերոս—անձնուրաց սատանի ճուտին:

Այդ միջոցին գյուղի ծայրին յերևաց կազակների խումբը:

Գոռոզ ու հաղթանակած կազակները հետզհետե մոտենում եյին մեզ, ձիերը խաղացնելով և... նորից մի զարհուրելի տեսարան բացվեց գյուղի աչքի առաջ:

Դահլճներն իրենց առաջն եյին զցել ձեռքերը կապած, գունատված ու աչքերն արյունոտված Գենոյին, վորի լետից, մտրակի հարվածներ տալով, գալիս եր մուգիկանտ Ստեփան Ավալիանին: Ամեն մի քայլափոխին մտրակի հարվածներ ելին հասնում Գենոյի դեմքին, գլխին, ուսերին, և նա ել ոձի պես գալարվում էր յուրաքանչյուր դառը հարվածի հետ միաժամանակ:

Ահա մոտեցան մեզ, Կվերկվիզեյի դիակի մոտ քավաքավածներիս, և խումբն ել կանգ առավ:

Վճրն ե արդյոք Կվերկվիզեյին սպանողը:

Ո՛հ, ինչ դահճի դեմք են կրում ամենքն ել: Դըթերը ճխլված, դեմքերը յուղոտված, բեղերը վոլորած...

Ո՛հ, ինչ զզվելի կերպով են ծիծաղում...

Միթե դրանք սիրտ չունեն, ու սրտի տեղ մի քար ե դրված նրանց կրծքում:

Հանկարծ Ստեփանը նկատեց մեր կողմը չեկող Ցուցայային, վոր նոր եր փռել թոկի վրա իր մաքուր վացած չթի շրջադգեստը:

Ցուցայան, յերևի, լրիվ չգիտեր Ստեփանի հետ պատահած դժբախտությունը, բայց և լայնա նրա դեմքն աչնքան գունատ ու վշտացած եր, վոր հիշեցնում եր դադաղի մեջ պառկած մի ննջեցյալի: Ստեփանը, նրան տեսնելուն պես, վազեց մոտը, բռնեց կռնից ու քարշ տվեց Գենույի մոտ:

-- Ահա քո Գենուն, վորի պատճառով ինձ խալտառակեցիր... Դե, չեթե կարող ես, ոգնիր նրան աշտըմ: Դե, ազատիր նրան իմ ծեծից,—ասաց Ստեփանն ու նորից թափահարեց մտրակն ոգում ու նորից բըղավում եր:

— Ահա այսպես պետք ե ուտացնել քեզ պես սոցիալիստին, ահա այսպես, ահալիստան: Հո կարողացմ քեզ հաղթել, վրեժս լուծել: Միթե կարծում եիր, թե Ստեփան Ավալիանին կմարսի քո արածները...

Այդ տեսարանին ներկա յեղող կազակները ժլատում ելին, միմյանց չերեսի նայելով ու ինչ-վոր առում իրար մեզ ահասկանալի լեզվով:

Իսկ պրիստապն ու գյուղապետը դիտմամբ աչքե-

ըը հեռացնում ելին այդ զարհուրելի տեսարանից, կամենալով ցույց տալ ժողովրդին, թե իբր այդ գազանությունն իրենց արած գործը չե...

Իսկ ներկա յեղողները զարհուրած, ատամները կրճտացնելով նայում ելին գետնին անձայն, անխոս, կարծես այնտեղ ելին վորոհում այդ գազանության, անարդարության պատճառը:

Այդ միջոցին մի ինչ-վոր անձ դառնապես ճշաց և կտրված ծառի նման տապալվեց գետին... Դա ծուցական եր, վորի մոտ իսկույն վազեցին կանալք և տղերանց ոգնությամբ ուշաթափվածին տարան տուն:

— Սակայն այս ի՞նչ բան ե... միջանի տեղ կըրակե լեզուներ են բարձրանում դեպի յերկինք:

— Կրակ...

— Հրդեհ...

— Գենուլի տունն այրվում ե...

— Նեստորի տունն այրվում ե...

— Սամսոնի տունն այրվում ե...

Լսվում են ձայներ, և սարսուռ հանցնում մեր ըստրիս մարմնով: Մարդկանց մազերը բիզ-բիզ են կանգնում:

Յեվ ամենքը վազում են կրակե լեզուների կողմը:

Դիտողը գիտե յեղբայրություն, բարեկամություն...

Մեկի ցավը ամենքի ցավն ե... Մեկի դժբախտությունը—ամենքի դժբախտությունը...

Յեվ ամենքը վազում են կրակի կողմը, և նորից լսվում են լքվածների ձայները.

— Ոգնեցե՛ք...

## XV

Յես մեխի պես ցցվել եմ մի տեղ...

Հեքիաթային կախարդութեամբ անյնում են աչքիս առջև սարսափելի պատկերները... Տարակուսանքի աղջամուղջը ծանրացնում ե գիտակցութունս, և յես չեմ կարողանում պարզել տեղի ունեցող տեսարանը:

Բայց բղավում են, թե Սամսոնի տունն այրվում ե: Ձե՞ վոր դա մեր տունն ե, իմ ոջախը, իմ որորոցը...

— Ուզնեցե՞ք,— գոռում եմ յես ու սրտապատառ վազում տան կողմը:

Յեմ իմ աչքի առջև բացվում ե հետևյալ պատկերը. այրվում ե հորս քրտինքով ու դառն աշխատանքով կառուցված տունը, Կրակի հանդուգն լեզուները համբուրում, գգվում են իմ որորոցը: Բախում ճշում ե մայրս հերարձակ, Հավի ճուտերի նման ցրիվ են յեկել քուլրերս ու յեղբայրներս այրվող տան շուրջը:

Գյուղացիք շրջապատել եյին տունը և կարծես ուզում եյին ազատել վորեւ բան, բայց նրանց դիմադրում եյին կրակի ոձանման լեզուները, և այրվում եր իմ ոջախը, իմ որորոցը... Յեմ ճշում եր մայրս խելագարի պես, լաց եյին լինում հավի ճուտերի պես բախում ցրիվ յեկած քուլրերս ու յեղբայրներս, իսկ գյուղացիք շրջապատել եյին տունը, կացիններ ու դաշույններ ձեռքներին:

— Վճրտեղ ե հայրիկը, վճրտեղ,— գոռում եմ յես...

— Սո՛ւս, զգո՛ւշ, ձայն չհանես... Նա թալնված ե, անտառ ե փախել կազակների ձեռքից,— պատասխանում ե ինձ մի հարեան:

Դարձյալ լաց ե լինում մալրս, յերեսը ճանկոտելով, դարձյալ ճչում են բակի մեջ ցիրուցան յեղած քույրերս ու յեղբայրներս...

— Ճաճվալամ, ինձ մոտ արի, մյ տղա, հեռանանք այստեղից, — ասում ե ինձ Ղուտուլան հեալով ու դողդողալով...

— Ի՞նչ ես ուզում ինձնից, — հարցնում եմ չես:

— Հիշո՞ւմ ես, վոր մենք յերգվեցինք իրար, վոր վրեժ առնենք թշնամուց: Մեր Կվերկվիզեյին սպանեցին, մեր ծուցայալին սպանեցին, մեր տներն այրեցին, ամենքին վիրավորեցին ու հաշմանդամ դարձրին... Ո՛հ, ի՜նչքան զղվելի չեմ ուզիկանս Ստեփանը... Այժմ յես ամեն ինչ հասկացա, արի՛. գնանք միասին, մյ տղա, արի՛ գնանք, պարսատիկդ պինդ պահիր ձեռքումդ:

Յեվ յես ել տնձայն, մեքենայաբար հեռւում եմ Ղուտուլային:

Մոտեցանք բակի մեծ դռան, վորտեղ մեզ դիմավորեցին Դաթիկոն ու Բաչքունիան:

— Ահա այստեղ կանգնենք, պարսատիկների մեջ քարեր դարսեցեք, և յերբ յես ձեզ ասեմ. «Խփեք աչդ շներին», — իսկուհն պարսատիկները գործողության մեջ դրեք... Նրանք այս կողմն են անցնելու, — ասում ե Ղուտուլան, և յես հիշում եմ իմ սիրած ժողովրդական հերոսներ Արսենին, Ղարամանին, Շալվալին ու Ռոստեանին:

Հիշում եմ և ուրախանում, հալվում եմ սիրուց:

— Յձվդ տանեմ, սիրելի Ղուտուլա, — ասում եմ արտասովալից աչքերով ու դրկում գունատված Ղուտուլային:

— Հիմա դրա ժամանակը չե... դալի՜ս են,— ասաց Ղուտուհան, և իրոք, փողոցում յերևաց կազակներ խուժբը...

Գենուդին ծեծելով իր սիրտը հովացրած Ստեփանն ել, ձի հեծած, կազակներ չհետ ել:

Ղուտուհայի հրամանով Թագնվեցինք ցածր պատի յետևում և բաց թողինք պարսատիկները: Մի բուպե — և պրիստովը, Ստեփանն ու մի կազակ կախվեցին Թամբերից...

Պարսատիկներով նետած քարերն ուղղակի դիպել ելին ճակատներին:

Թե ինչ պատահեց դրանից հետո, չգիտեմ... Հիշում եմ միայն, վոր յերբ մենք յերկրորդ անգամ պատրաստվում ելինք քարեր նետել, կազակները ձիերը սլացրին մեր կողմը և սկսեցին հարվածել մեզ հրացանի կոթերով...

Հիշում եմ միայն, վոր այդ ժամանակ մի ինչ-վոր բան կայծակի պես դիպավ գլխիս, և չես ել՝ գլուխկցուցիլունս կորցրած՝ տապալվեցի...

## XVI

Չեմ հիշում, թե վորքան ժամանակ ելի ուշաթափված, գիտեմ միայն, վոր յերբ ուշքի չեկա ու աչքերս բաց արի, տեսա մորս սնարիս մոտ նստած՝ յերեսը ճանկոտած ու աչքերը կիսախուռի...

Յես պառկած ելի մի փոքր, մուլթ խրճիթում, վորտեղ անգղի կամ ագռավի նման մի ինչ վոր սև ստվեր շարժվում էր իմ անկենդան աչքերիս առջև ու խանգարում ինձ տեսնելու մորս դիմքը: Հետո յես գլխի ընկա, վոր այդ խրճիթը պապերիս կառուցած մի

քարաշեն սենյակ եր, վորը մեզ ծառայում եր իբրև խոհանոց և ամբողջապես մրոտված եր: Նա պատուհաններ չուներ, բայց դրա փոխարեն ուներ բազմաթիվ ճեղքեր, վորոնք թե լույս ելին հասցնում նրան և թե մաքրում նրա ոգը:

Այդ ճեղքերի շնորհիվ յես հասկացա, վոր որը վերջանալու վրա չե, ու վրա չե հասնում գիշերն իր սև ծածկոցով:

— Մայրիկ, — բացականչում եմ տնքալով ու աչքերս հառում մորս ճանկռտած դեմքին:

— Ի՞նչ ե, ցավի տանեմ, — պատասխանում ե մայրս ուրախացած ու համբուրում աչքերս:

— Այս վերտեղ եմ, մայրիկ...

— Տանն ես, զավակս...

— Այս ի՞նչ ե պատահել, մայրիկ, — հարցնում եմ նրան ու շոշափում ծնողական ծծերը:

— Առանձին վոչինչ չի պատահել, զավակս, հանգստացիր:

— Մայրիկ, քաղցր են քո ծնողական ծծերը:

— Քաղցր են, զավակս:

— Քաղցր ե հորս քրտնած կուրծքը:

— Քաղցր ե, զավակս:

— Քաղցր ե քույրերի, յեղբայրների ու հասակակից ընկերների ճովողյունը:

— Քաղցր ե, զավակս:

— Գեղեցիկ են կյանքը, արևը, աշխարհը...

— Գեղեցիկ են, զավակս:

— Հապա հվքեր են դառնացնում մայրերի ծնողական ծծերը, հվքեր են ուժասպառ անում հայրերի քրտնած կուրծքը... Ո՞վքեր են սպանում քույ-

ըերի, լեղբայրների և հասակակից ընկերների ճովողունը: Ո՞վքեր են թունավորում կյանքը, արևը, աշխարհը...

— Ձար մարդիկ, զավակս:

— Մայրիկ, շատ են արդյոք չար մարդիկ:

— Շատ են, զավակս:

— Վճրտեղ են նրանք:

— Ամեն տեղ, աշխարհումս շատ ե նրանց թիվը:

— Մայրիկ, մայրիկ...—Լաց եմ լինում չես ու փարում քնքուշ, քաղցր մորս:

— Հանգստացիր, զավակս, հանգստացիր... վերքերդ կբացվեն...

— Ո՛հ, ճիշտ, մայրիկ, յես վիրավորված եմ,—ասում եմ չես սթափվելով ու քսում ձեռքս դլխիս:

— Գլուխս ճեղքված ե...

— Ո՛հ, զավակս, ճեղքված ե, բայց մի վախենա, շուտով կլավանաս:

— Մայրիկ, ասա ինձ ամեն ինչ... Վճրտեղ ե Գինոն:

— Նրան ձերբակալեցին... բանտումն ե:

— Յերևի, դարձյալ կչարչարեն...

— Յերևի, զավակս:

— Ո՛հ, ինչ զարհուրելի տեսարան եր, յերբ Ստեփանը ծեծում եր նրան... Նրա աչքերը դադանի աչքերի պես վառվում եին, ցամաքած, արյունոտված շրթունքները ցնցվում եին... կանգնած եր պինդ, բայց մարմինն ոճի նման գալարվում եր: Յերևի, մայրիկ, սաստիկ ցավեր եր զգում այն ժամանակ Գինոն:

— Յերևի, զավակս:

— Բայց չե՞րբ ծուցայան ուշաթափվեց և կտրված նոճիի նման տապալվեց գետին, Գինոն փորձեց վազրի պես հարձակվել Ստեփանի վրա, վորպեսզի պատառտեր, չերկու կես աներ նրան...

— Հետո:

— Հետո ա՛յն, վոր չկարողացավ, վորովհետև թոկերը շատ պինդ էյին, և չե՞րբ նորից սկսեցին նրան ծեծել, նա, ատամները կրճատեցնելով, մի բառ միայն արտասանեց՝ «շնճր»...

— Ո՛հ, վճրքան զարհուրելի չե՞ր, մայրիկ, այդ մեկ բառը: Յերեի, ամեն անգամ, մինչև մահս, հենց վոր այդ բառը հիշեմ, մարմինս կսարսռա: Բայց, ասա ինձ, մայրիկ, վճրտեղ ե՞ հալրս:

— Նա թազնվում ե, զավակս, վախենում ե, վոր ձերբակալեն...

— Տուն չի՞ դալիս...

— Մի անգամ լեկավ... այժմ ել դալու յե, միայն այդ մասին վոչվոք չպետք ե տեղեկանա...

— Ինչո՞ւ, մայրիկ:

— Այն պատճառով, վոր վտանգավոր ե: Կարող ե վորևե մեկը մատնել:

— Միթե բացի Ստեփանից ուրիշ դավաճաններ ել կան մեզ մոտ...

— Կան, զավակս: Միության պարտութուն կրելուց հետո վոմանք անցան թշնամու կողմը: Նրանք շարունակ այցելում են պրիստավին ու կազակներին:

— Հետո:

— Հետո ել ա՛յն, վոր նրանք լրտեսությամբ են պարապում: Նրանց տեղեկացնում են, թե ովքեր զենք ունեն և ովքեր են ազիտացիա մղում...

— Հետո

— Հետո այն, վոր շատերին ձերբակալեցին...  
Որինակ՝ Նեստորին, Սերափիին, Լուկային և ուրիշ-  
ներին:

— Դրանք վճռտեղ են այժմ:

— Յերևի, Գենույի հետ միասին, բանտում...  
Իսկ Յուդայան վճռտեղ է, մայրիկ:

— Յուդայան մեռավ, զավակս... Յերբ ուշաթափ-  
վել եր ու վայր ընկել, գլուխը դիպել եր քարի... Այն-  
պես մեռավ խեղճը, վոր ուշքի յել չեկավ...

— Խեղճ Յուդայա, ինչպես ճակատադրական  
դարձավ նրա սիրահարությունը...

— Այդպես է, վորդի, բախտ չի ունեցել:

— Իսկ վճռտեղ են Ղուտուան ու Բաչքունիան \*),

— Ղուտուան փախավ կազակների ձեռքից, ու  
վոչվորի հայտնի չե, թե ուր է այժմ... Միայն Կոս-  
տայի վորդի Դաթիկոյին խնդրել է տեղեկացնել մորը,  
վոր ինքն այլևս տուն չի վերադառնալ, վորովհետև  
իր համար անպատվություն է համարում Ստեփանի  
նման հոր տանն ապրել...

— Ճիշտ, մայրիկ:

— Այո, վորդի:

— Ինչ լավ տղա չե, մայրիկ, Ղուտուան... Առաջ  
նա համակրում եր իր հորը, իսկ հետո, տեսնելով նրա  
զազանությունը, յերեսը շուռ տվեց ու անցավ մեր  
կողմը...

---

\* ) Իմ ընկեր Բաչքունիան հետադառնում սպանվեց հայ-  
վրացական պատերազմում, Ղուտուան բանվոր է այժմ ադ-  
յուաի գործարանում, իսկ Դաթիկոն—մանրավաճառ Խոնի  
քաղաքում:

— Այո, վորդի, ասոր ամենքը գովում են նրան...

— Իսկ ինքը Ստեփանն թնչ ե ասում, մայրիկ՝

— Յուցալացի մահն ու Ղուտուայի վարմունքն աստամները սրած մի գազան դարձրին նրան... Այս ու աչն կողմն ե ընկնում արյան ծարավի դալլի պես... Յերևի, դեռ շատերին կզոհի այդ դավաճանը...

— Բաչքունիան ալժմ թնչ՝ ե անում, մայրիկ:

— Նրա գլխին ել ե, քեզ նման, դիպել, հրացանի կոթը... Պառկած ե տանը, բժշկում են...

— Մայրիկ, մեր տունն թնչպես ալրեցին...

— Յես այստեղ խոհանոցումն եյի... Ճաշ ելի պատրաստում... Այդ միջոցին յերկու կաղակ ցածր պատի վրայով ձիերը թոցրին... Մոտեցան տանը ե պատերի վրա ինչ-վոր հեղուկ ածեցին, յերևի, նավթ կլիներ, ե հետո վառեցին...

— Հետո...

— Հետո աչն, վոր յես սկսեցի ճչալ... Յերեխաները բարձրաձայն լաց յեղան, ե այրվեց, վորդիս, մեր կացարանը, մեր բունը, մեր որորոցը...

— Մայրիկ, մայրիկ, — հեկեկում եմ յես ու շընչասպառ փաթաթվում քնքուշ, քաղցր մորս, համբուրում եմ ծնողական ծծերը, ե խրճիթում ման ե դալիս անգղի կամ ագռավի սև ուրվականը ե դալիս ե դադտագողի, սև ծածկոցով գիշերը, ու յես ել ցնորում եմ նորից:

— Մայրիկ, տեսնում ես, հրես Կլերկվիզեն... Նա գլխաբաց ու վոտաբորիկ ե... Նա միայն յապիկ ու վարտիկ ունի հագած, բաց նա սատանի ճուտ ե... Մայրիկ, տեսնում ես, ինչպես ե նա սլացնում Կոստայի «Գորա» ձին... Սատանի ճուտը պինդ բռնել ե

ձիու բաշն ու սլանում ե, սլանում անձնվիրաբար, բազկից ել արագ և ուզում ե հասնել կաղակներին, նրանցից ել առաջ անցնել... Հրեն քիչ ե մնացել, վոր անտառը մտնի... Նա աչնտեղ կթագնվի... Բայց հի, մայրիկ, այն ի՞նչ ե պատահում... Սատանի ճուտը խաղագնդակի նման գլորվեց գետնի վրա... Խեղճ Կվերկվիզեյի կրծքից արշուճն ե դուրս թափվում... Մայրիկ, Կվերկվիզեն մեռնում ե...

— Հանգստացիր, զավակս,—ասում ե ինձ մայրս ու գրկում ինձ, դգվում, համբուրում...

— Տեսնում ես, մայրիկ, ահա վոսկյա, բարի արևը, բայց նա ել ե հեռանում չերկրից... Գնում ե դեպի մի ինչ-վոր անդունդ... Յեվ ահա հենց այս ժամանակ Յուլցայան անջատվել ե իր հասակակից ընկերուհիներից և նայում ե արևին մի թուլացած սոխակի պես... Յուլցայայի դեմքն սպիտակ ե շաքարի պես, բայց նորր ե, ինչպես մի բարակ թուղթ... Նրա քարայծի նման աչքերը լցվել են արտասուքով, և չես հարցնում եմ նրան.

— Յուլցայա, իմ աչքի լույս, ի՞նչ հաճույք ես զգում մայր մտնող արևին յոդպես նայելուց... Դեպի հիւր են սլանում քո հոգին, քո միտքը, քո զգացմունքը. .

— Յես վոչ մի կողմ չեմ սլանում, բարի տղա,— պատասխանում ե նա,—կամենում եմ միայն կանգնել այստեղ ու լսել, թե ինչպես ե փսփսում հովը տերևներում, ինչպես ե սուլում գարնան սառյակը: Ձե՞ չես նրանց շատ եմ սիրում...

— Սիրելի քույր Յուլցայա, յես հասկանում եմ քո տված պատասխանը, բայց դու սաստիկ վհատված ես: Հրեն, տես՝ քո հասակակից ընկերուհիներդ փերի-

ների նման շրջադատել են ծաղիկները, խաղում, վտա-  
տոտում են վարդագույն ցնորքներում... Իսկ դու  
անջատվել ես նրանցից, ինչպես մի վիրավոր կարապ-  
իը քարվանից... Այդ գրավիչ աչքերդ անդամ արտաս-  
վել են...

— Հանդատացիր, զավակս, — ասում է ու նորից  
գրկում ինձ մայրս, և չես համբուրում եմ, շնչասպառ  
լաց լինելով, նրա ծծերը:

— Մայրիկ, քաղցր են քո ծնողական ծծերը...

— Քաղցր են, զավակս:

— Քաղցր է հորս քրտնած կուրծքը...

— Քաղցր է, զավակս:

— Քնքուշ է քույրերի, չեղբայրների ու հասա-  
կակից ընկերների ծիծեռնակային ճռվողչուհը...

— Քնքուշ է, զավակս:

— Լավ են կյանքը, արևն ու աշխարհը...

— Լավ են, զավակս:

— Հապա հիվեր են արդյոք դառնացնում մալ-  
րերի ծծերը: Ո՞վքեր են ուժասպառ անում հայրերի  
քրտնքոտ կուրծքը: Ո՞վքեր են սպանում քույրերի,  
չեղբայրների և հասակակից ընկերների ծիծեռնակա-  
յին ճռվողչուհը: Ո՞վքեր են թունավորում կյանքը,  
արևը, աշխարհը...

— Չար մարդիկ, զավակս:

— Մայրիկ, պետք է արդյոք չես մեծանամ,  
թե վոչ...

— Կմեծանաս, զավակս:


— Կլինեմ արդյոք մեծ, բեղ ու միրհւքով:

— Այո, կլինես, զավակս:

— Ուրեմն գրկիր ինձ, մայրիկ, պինդ գրկիր...

Յեվ յես նորից փարում եմ քնքուշ, քաղցր  
մորս... Յեվ յես համբուրում եմ նրա ծնողական  
ծծերը:

Յեվ ման ե դալիս խրճիթում անգղի կամ  
ադռավի մի ինչ-վոր սև ուրվական, և դադառազողի  
իջնում ե գիշերը սև ծածկոցով...



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045587

(204.)

П. САМСОНИДЗЕ

**Первый бурелом**

перев. с грузинского

A 889



ფიზიკ 25 ყ.

